# ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

39ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 05 (1905) ՇԱԲԱԹ, ՓԵՏՐՈՒԱՐ 9, 2019
VOLUME 39, NO. 05 (1905) SATURDAY FEBRUARY 9, 2019

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

## Պէտք Չէ Տարուիլ Ֆէյսպուքեան Կեղծ Լուրերով

2004 թուականին հրապարակ եկաւ Ֆէյսպուքի ընկերային կայքը, նպատակ ունենալով ցանցային կապ ստեղծելու դասընկերներու, բարեկամներու եւ ծանօթներու միջեւ: Շատ արագ զարգանալով այսօր աշխարհի տարածքին երկու միլիառ մարդ մաս կը կազմեն այդ ցանցին:

Իր հիմնական նպատակէն անդին երթալով, Ֆէյսպուք վերածուեցաւ նաեւ լուրերու արագ տարածման հարթակի ու սկսաւ օգտագործուիլ որպէս հանրային կարծիք ձեւաւորելու միջոց՝ ազդելու համար ժողովուրդի քաղաքական մտածելակերպին ու ընտրական դիրքորոշումներուն վրայ: Այս ընթացքին հրապարակ եկաւ նաեւ դիտաւորեալ կեղծ լուրեր տարածելու սովորոյթը: Այս միջոցը օգտագործուեցաւ յատկապէս Ամերիկայի նախագահական ընտրութիւններուն ընթացքին՝ նպաստելով Տանըլտ Թրամփի անակնկալ յաղթանակին:

Ֆէյսպուքի միջոցաւ կեղծ լուրեր տարածելու ախտը հասաւ նաեւ Հայաստան, յատկապէս թաւշեայ յեղափոխութենէն ետք: Այսօր հայկական համացանցը ողողուած է կեղծ էջերով ու լուրերով, որոնց գլխաւոր նպատակն է ժողովուրդը հանել նոր իշխանութիւններուն դէմ եւ պատմութեան անիւը դարձնել դէպի ետ:

Փաշինեանի շրջապատի գործած ամենէն փոքր սխալներն ու անզգոյշ արտայայտութիւնները կը ներկայացուին որպէս մեծ սկատալներ ու փորձ կը կատարուի ժողովուրդը համոզելու թէ՝ ոչ մէկ տարբերութիւն կայ հին իշխանութեան ներկայացուցիչներուն եւ նորերուն միջեւ, պարզապէս փոխուած են դէմքերը, իսկ բովանդակութիւնը մնացած է նոյնը:

Հայկական կեղծ էջերու ետին պարզ է թէ կանգնած են նախկին իշխանութիւններու ներկայացուցիչները, որոնք համակարգուած ձեւով իրենց հսկողութեան տակ կ՛առնեն լրատուական դաշտը՝ հեռատեսիլներ, ռատիոյի ալիքներ ու ինթերնեթային լրատու կայքէջեր գնելով: Չբաւարարուելով պաշտօնական լրատուական միջոցներով, անոնք լայնօրէն կ՛օգտագործեն նաեւ Ֆէյսպուքեան կեղծ կայքերը:

Դժբախտաբար կան մեծ թիւով մարդիկ, որոնք, լուրեր քաղելու միակ աղբիւրը իրենց համար դարձուցած են Ֆէյսպուքը:

Հայաստանի թէ սփիւռքի մէջ, Հայ ընթերցողները պէտք է ըլլան աւելի ուշադիր ու ճշմարտութիւնը ստուգելու համար պէտք է դիմել մէկէ աւելի աղբիւրներու:

Չտարուիլ ֆէյսպուքեան կեղծ լուրերով ու մանաւանդ չտարածել շրջապատին մօտ:

«ՄԱՍԻՍ»

## Փաշինեանը Բաւարարուած է Մերքէլի Հետ Բանակցութիւններու Արդիւնքէն




Նիկոլ Փաշինեանը եւ Գերմանիոյ վարչապետ Անկելա Մերքէլ Պերլինի մէջ տեղի ունեցած ասուլիսի ընթացքին

*Վարչապետ Նիկոլ Փաշինեանը բաւարարուած է Գերմանիոյ վարչապետ Անկելա Մերքէլի հետ բանակցութիւններու արդիւնքներէն: Այդ մասին Փաշինեանը յայտարարած է հանդիպման յաջորդած մամլոյ ասուլիսի ժամանակ:*

*«Կարող ենք արձանագրել, որ այս պահին գոնէ ես բաւարարուած եմ մեր քննարկումների արդիւնքներից, բանակցութիւնների արդիւնքներից, եւ կարող ենք արձանագրել, որ Հայաստանի եւ Գերմանիայի յարաբերութիւնների յետագայ զարգացման համար ոչ միայն խոչընդոտներ չկան, այլեւ կարծես թէ կայ փոխադարձ հետաքրքրութիւն այդ յարաբերութիւններին նոր ազդակ, նոր թափ հաղորդելու, եւ ես համոզուած եմ, որ այդպէս էլ տեղի կ՚ունենայ», - ըսած է Փաշինեանը:*

*Վարչապետը նշած է, որ քննարկած են երկկողմ հարցերուն վերաբերող լայն շրջանակ, այդ շարքին՝ առանձնայատուկ կարեւորութիւն ստացած է տնտեսական համագործակցութեան թեման:*

*Վարչապետը նշած է, որ խօսած են նաեւ տարածաշրջանային*

Շար.ը էջ 5

## Մայր Աթոռի Պատուիրակները Հանդիպած են Թուրքիոյ Արտաքին Գործոց Նախարար՝ Չաւուշօղլուի Հետ

*«Ակօս» թերթի հաղորդմամբ, Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Մեւլութ Չաւուշօղլուն Անգարայի մէջ Արեւմտեան Եւրոպայի հայրապետական պատուիրակ, Վատիկանի մէջ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտօնական ներկայացուցիչ Խաժակ արք. Պարսամեանի հետ հանդիպման ժամանակ յայտարարած է, թէ Պոլսոյ հայ համայնքը պատրիարքական ընտրութեան հարցի լուծման համար պէտք է «քիչ մըն ալ համբերէ»:*

*Հանդիպման ժամանակ, որուն ընթացքին քննարկուած է Պոլսոյ Հայոց նոր պատրիարքի ընտրութեան հարցը, ներկայ եղած են նաեւ Պոլսոյ Հայոց պատրիարքի ընդհանուր փոխանորդ Արամ արք. Աթէշեանը եւ Մայր Աթոռի միջեկեղեցական յարաբերութիւններու գրասենեակի ղեկավար Շահէ ծայրագոյն վարդապետ Անանեանը:*

*Խաժակ Սրբազանը «Ակօս»-ի հետ զրոյցի ժամանակ նշելով, որ այս հանդիպման գաղափարը Ամենայն Հայոց կաթողիկոսինը եղած է՝ շեշտած է, որ նախաձեռնութեան նպատակը ոչ թէ հարցին միջամտելն է, այլ լուծման նպաստելը:*

*Արք. Պարսամեանը մանրա-*

Շար.ը էջ 5

## Freedom House. Հայաստանը 2018-ին Ժողովրդավարութեան Առումով Ամենամեծ Առաջընթացը Արձանագրած Երկիրներէն Է

*«Freedom House» (Ազատութեան Տուն) իրավապաշտպան կազմակերպութիւնը հրապարակած է աշխարհի մէջ ժողովրդավարական զարգացումներուն նուիրուած «Freedom in the World» զեկոյցը, ուր անդրադարձ կայ նաեւ Հայաստանին: «Արմէնփրես»-ի հաղորդմամբ, զեկոյցին մէջ Հայաստանը դասուած է «Մասամբ ազատ» այն երկիրներու շարքին, որոնք 2018 թուականին զգալի յառաջընթաց արձանագրած են ժողովրդավարութեան առումով:*

*Ընդհանուր առմամբ, գնահատելով ժողովրդավարութեան մակարդակը 25 տարբեր չափորոշիչներով՝ Freedom House-ը Հայաստանի մէջ 2018-ին 6 միաւորի առաջընթաց արձանագրած է: Ըստ այդմ, Հայաստանը այս անգամ ստացած է 100 հնարաւորէն 50-ը՝ նախորդ տարուան 44-ի փոխարէն: Սա, ըստ փորձագէտներու, ամենանշանակալի առաջընթացներէն մէկն է աշխարհի մէջ:*

*Զեկոյցին մէջ կը նշուի, որ նախորդ տարի Հայաստանի մէջ բազմաթիւ քաղաքացիներ դուրս եկած էին փողոց այդ ժամանակուան իշխանութիւններուն դէմ բողոքի ցոյցերով: Կը նշուի, որ շարունակուող բողոքի ցոյցերը յանգեցուցած էին խորհրդարանի կողմէ վարչապետ ընտրուած Սերժ Սարգսեանի հրաժարականին, որուն արդիւնքով շարժումը գլխաւորող Նիկոլ Փաշինեանը դարձած է վարչապետ: «Ամիսներ անց, երբ Դեկտեմբերին տեղի ունեցան արտահերթ խորհրդարանական ընտրութիւններ, Նիկոլ Փաշինեանի գլխաւորած «Իմ քայլը» դաշինքը յաղթեց: Խորհրդարանական մեծամասնութիւնը խոստացած է*

Շար.ը էջ 4

## Իսրայէլի Կառավարութիւնը Վերցուցած Է Ատրպէյճանին Անօդաչու Թռչող Սարքեր Վաճառելու Արգելքը

*Իսրայէլի պաշտպանութեան նախարարութիւնը անօդաչու թռչող սարքերու (ԱԹՍ) արտադրութեամբ զբաղող Aeronautics ընկերութեան թոյլատրած է շարունակել սարքերու վաճառքը Ատրպէյճանին: Այս մասին կը յայտնէ «The Times of Israel»-ը:*

*2017-ի Օգոստոսին իսրայէլական թերթերէն մէկը տեղեկատուութիւն տարածած էր, որ Aeronautics ընկերութեան բարձրաստիճան ներկայացուցիչները Ատրպէյճանի պահանջով իրենց արտադրած ԱԹՍ-ները այդ երկրին վաճառելէն առաջ փորձարկած են հայկական դիրքերու ուղղութեամբ: Իսրայէլի պաշտպանութեան նախարարութիւնը հետաքննութիւն սկսած էր, իսկ անցած շաբաթ տեղեկատուութիւն տարածուեցաւ, որ պաշտպանութեան նախարա-*

Շար.ը էջ 5

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Սերժ Սարգսեանը Մարտի 1-ի Մասին. Ինչ Են Պարզել Քննիչները

ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ

*Յատուկ քննչական ծառայութիւնը չի հաստատել ու չի հերքել, որ Մարտի 1-ի գործով մօտ հինգ ժամ հարցաքննուել է երրորդ նախագահ Սերժ Սարգսեանը:*

*Միւս կողմից, այդպիսի հարցաքննութեան բացակայութիւնը անտրամաբանական կը լինէր: Ի վերջոյ, խօսքը մարդու մասին է, որը 2008 թուականի Մարտի 1-ին Հայաստանի գործող վարչապետ էր, պաշտօնապէս ընտրուած նախագահ, խորհրդարանի մեծամասնութիւն կազմող ուժի առաջնորդ:*

*Նա իշխանութեան իրական կրող էր, ըստ այդմ առկայ են նուազագոյն հարցեր: Օրինակ, Սերժ Սարգսեանը ի՞նչ մօտեցում է ունեցել ընդհանրապէս ծաւալուող տասնօրեայ հանրահաւաքների կապակցութեամբ, նա ի՞նչ մասնակցութիւն է ունեցել դրանց հանդէպ իշխանութեան դիրքորոշման, քայլերի մշակման հարցում, ընդհուպ հենց Մարտի 1-ի օրը: Նա ինչպէ՞ս էր պատկերացնում իրադարձութիւնների յետագայ զարգացումը Փետրուարի 29-ին, երբ կոալիցիա էր կազմում պաշտօնապէս երրորդ արդիւնքն ունեցող թեկնածու Արթուր Բաղդասարեանի հետ: Հաշուի առնելով այն, որ Բաղդասարեանը յետոյ յայտարարել է պարբերաբար, որ հակառակ դէպքում՝ եթէ չգնար կոալիցիայի, կը լինէր աւելի մեծ արիւնայեղութիւն: Ի՞նչ գիտէր Բաղդասարեանը, նրան ի՞նչ էր ասել Սերժ Սարգսեանը, որ նա գնացել էր իր համար քաղաքական մահ նշանակող կոալիցիային:*

*Սերժ Սարգսեանը տեղեա՞կ էր դրանից մի քանի ժամ անց՝ Մարտի 1-ի լուսադէմին Ազատութեան հրապարակում ոստիկանական գործողութիւնից, գիտէ՞ր, որ լինելու է այդ գործողութիւնը, ինչից էլ փաստօրէն սկսուեց դէպքերի բախումնային եւ ի վերջոյ ողբերգական ընթացքը:*

*Օրուայ ընթացքում Սարգսեանը ունեցե՞լ է տարակարծութիւն Ռոբերտ Քոչարեանի հետ՝ նրա որոշումների եւ մօտեցումների հարցում: Ինքը փորձե՞լ է կապ հաստատել Լեւոն Տէր-Պետրոսեանի հետ եւ հանգուցալուծել իրավիճակը: Թէ՞ Սերժ Սարգսեանը չի արել իրավիճակի հանգուցալուծման որեւէ փորձ, նկատի ունենալով այն, որ միեւնոյն է ամբողջ պատասխանատուութիւնը Ռոբերտ Քոչարեանի վրայ է եւ իրադարձութիւնների բախումնային զարգացումը կ'աշխատի Ռոբերտ Քոչարեանի դէմ յետագայ տասնամեակում, յատկապէս, որ Սարգսեանը վստահ կը լինէր, որ յետագայ տասնամեակում Քոչարեանն աշխատելու է իր դէմ:*

*Հարցերի շրջանակը իսկապէս լայն է: Սերժ Սարգսեանն ինքը անցնող տասնամեակում բաւական քիչ է խօսել Մարտի 1-ի բուն զարգացումների մասին: Կարողացե՞լ են նրան «բացել» քննիչները, թէ՞ նա ինքը չի խօսել եւ ասելիքը պահել է այն ժամանակահատուածի համար, որը կը գտնի ասելու համար առաւել նպատակայարմար:*

*Ի վերջոյ, Սարգսեանի հարցաքննութիւնը տեղի է ունենում յատկանշական ներքին ու արտաքին ժամանակահատուածում, երբ թաւշեայ յեղափոխութիւնը մի կողմից կապիտալիզացման ընթացքում է արտաքին քաղաքական, այդ թւում արցախեան հարցում, միւս կողմից ինտենսիւացել է նախկին իշխող համակարգի կապիտալ ներդրումների հոսքը ներքին կեանքում այդ յեղափոխութիւնը տորպեդահարելու ուղղութեամբ: Ո՞ր ուղղութեամբ է իր խօսքը ներդրել Սերժ Սարգսեանը, ու՞մ համարել ճիշտ, իսկ ում՝ սխալ:*

*«ԼՐԱԳԻՐ»*

# Ինչ-որ Բան Այնպէս Չէ՞

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԷՍԵԱՆ

*Ատրպէյճանական կողմում, երեւում է, հրահանգ է իջեցուել՝ խախտելու քարոզչա-տեղեկատուական «հրադադարը»: Առիթը նախագահ Ալիեւի յայտարարութիւնն է, որ երկրի տարածքային ամբողջականութիւնը չի հանդիսացել, չի հանդիսանում եւ չի հանդիսանալու բանակցութիւնների առարկայ: Ալիեւն այդ մասին խօսել է երիտասարդական կազմակերպութիւնների ներկայացուցիչների հետ հանդիպմանը:*

*Փորձագէտները դա գնահատում են դիւանագիտական պատասխան վարչապետ Փաշինեանի այն յայտարարութեանը, որ «տարածքներ՝ խաղաղութեան դիմաց» բանաձեւը Հայաստանը չի քննարկում: Ատրպէյճանի նախկին արտգործնախարար Զուլֆուգարովը փորձում է հասկանալ, թէ այդ դէպքում ի՞նչ սկզբունքների վրայ է խարսխւում բանակցային գործընթացը եւ որոշակիօրէն ակնարկում, թէ ատրպէյճանական կողմը, չնայած պաշտօնական հաւաստիացումներին, այնուամենայնիւ «մօտեցել է կարմիր գծին»:*

*Ատրպէյճանական ընկալմամբ դա նշանակում է, որ Լեռնային Ղարաբաղին «կարող է տրուել միջազգայնօրէն համաձայնեցուած անցումային կարգավիճակ, իսկ երկու շրջանների՝ Քելբաջարի եւ Լաչինի վերադարձը կ'երկարաձգուի մինչեւ անորոշութիւն»: Նախկին արտգործնախարարի տեսակէտը փաստացի ԼՂ հարցում Ալիեւի քաղաքականութեան կոշտ քննադատութիւն է, որը նա փորձում է քօղարկել «ՄԱԿ-ի կանոնադրութեան համաձայն ռազմական ճանապարհով տարածքային ամբողջականութիւնը վերականգնելու՝ իշխանութիւնների հաստատակամութեան» մասին շաղակրատանքով:*

*Բոլորն էլ հասկանում են, որ Դուշանբերում Փաշինեան-Ալիեւ երկխօսութիւնից յետոյ այնպիսի իրավիճակ է ստեղծուել, որ զօրքերի շփման գծում հաւանական լարուածութեան պատասխանատու ուղղակիօրէն կը համարուի Ատրպէյճանը:*

*Դա այն դէպքում, երբ առկայ միջազգային բաւական լայն կոնսենսուս, որ խնդիրը ռազմական հանգուցալուծում չունի: Ատրպէյճանում սկսել են ակնարկել, որ Ռուսաստանի փոխարգործնախարար Կարասինի երեւանեան այցը ոչ այնքան ստուգողական էր, որքան՝ «տեսչական»:*

*Ըստ ատրպէյճանցի փորձագէտների, նոյն հարթութիւնում պէտք է գնահատել նաեւ Հայաստանին արդիական օդուժ վաճառելու մասին Ռուսաստանի որոշումը: Պաքւում տպաւորուած են, որ Ռուսաստանն այդ քայլերով Հայաստանին ներշնչում է չգնալ արագ քայլերի: Ատրպէյճանական կողմը փաստացի Ռուսաստանին կշտամբում է կարգաւորման բանակցային գործընթացն «արգելակների վրայ դնելու» դիւանագիտական ջանքերի համար՝ ի հակակշիռ ԱՄՆ-ի, որտեղ, ինչպէս Պաքուի փորձագիտական հանրութիւնն է տպաւորուած, ձգտում են հնարաւորինս մօտ ապագայում կողմերին տեսնել գոնէ ընդհանուր գծերով համաձայնութիւնների սեղանի շուրջ: Ինչ-որ բան ակնյայտօրէն այնպէս չի ստացւում, ինչպէս որ տպաւորուած էին Ատրպէյճանում, ուստի Պաքուի քարոզչութիւնը վերստին անցում է կատարում դէպի ուժային հռետորաբանութիւն:*

*Երեւում է նաեւ, որ ատրպէյճանական հասարակութիւնն այնքան միատարր չէ, ինչպէս թւում է: Խորքում աճում է ԼՂ հարցով իշխանութիւնների քաղաքականութիւնից դժգոհութիւն: Հաւանական է, որ բանակցութիւններում պաուզա պահելու առաջարկ կը ստացուի Պաքուից:*

*Դա, երեւի, տեղի կ'ունենայ արտգործնախարարներ Մնացականեանի եւ Մամեդիարովի՝ Փետրուարին սպասուող հանդիպումից յետոյ: Միջնորդների համար կը սկսուի Հայաստանի եւ Ատրպէյճանի առաջնորդների պաշտօնական բանակցութիւններ նախապատրաստելու բարդագոյն աշխատանքը, որը կ'ուղեկցուի նրանց տարածաշրջանային այցելութիւններով: Այդ միջակայքներում բանակցութիւններին վերադառնալու ի՞նչ քայլեր կ'անի պաշտօնական Ստեփանակերտը: Ատրպէյճանն ակնյայտօրէն փորձելու է շահարկել ուժային բաղադրիչը:*

*«ՀՐԱՊԱՐԱԿ»*

# Թեհրանում Ակնկալւում է Շարունակութիւն. Ինչ Կ'ասեն Փաշինեանն ու Ռոհանին

ԱՐԱՄ ԱՄԱՏՈՒՆԻ

*Փետրուարի 27-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը կ'այցելի Իրան, որտեղ հանդիպումներ կ'ունենայ այդ երկրի քաղաքական ղեկավարութեան եւ հայ համայնքի ներկայացուցիչների հետ: Այցի մասին Փաշինեանը յայտարարեց Գերմանիա կատարած այցի ընթացքում, ինչը յատկանշական էր այն իմաստով, որ հայ-իրանական յարաբերութիւնն ունի մեծ ներուժ ոչ միայն երկկողմ եւ ռեգիոնալ, այլ աւելի լայն իմաստով եւս: Այդ առումով յատկանշական մէկ այլ հանգամանք է այն, որ մինչ Փաշինեանի Իրան այցը՝ Փետրուարի 14-ին Սոչիում կը հանդիպեն Իրանի, Ռուսաստանի եւ Թուրքիայի նախագահները: Սա յայտնի Աստանայի ֆորմատն է, որ քննարկում է Սիրիային առնչուող հարցեր: Սակայն անկասկած է նաեւ, որ այդ ֆորմատն իր քննարկումների շրջանակ ընդգրկում է աւելի լայն խնդիրներ, թէկուզ սիրիական զարգացումների համատեքստում:*

*Միեւնոյն ժամանակ, ՌԴ արտգործնախարար Լաւրովը դեռեւս շաբաթներ առաջ ազդարարեց, որ Ռուսաստանը նախապատրաստում է նաեւ Մոսկուա, Պաքու, Թեհրան վեհաժողով, որը եւս արդէն ամիսներ շարունակ ձեւաւորուած ռեգիոնալ ֆորմատ է: Կը լինի դա մինչեւ Փաշինեանի այցը, թէ արդէն նրա այցից յետոյ: Խոշոր հաշուով, դա մեծ նշանակութիւն չունի, թէեւ, իհարկէ, փոխազդեցութեան հանգամանքը անխուսափելի է: Սակայն գլխաւորն այն է, որ ակնառու է հայ-իրանական երկկողմ յարաբերութիւնը նաեւ ֆորմատային նոր հարթութիւն դուրս բերելու խնդիրը, դրան առնուազն ռեգիոնալ շրջանակ հաղորդելով, իսկ հնարաւորութեան դէպքում, իհարկէ, նաեւ աւելի լայն համատեքստ եւ վեկտոր տալով՝ դէպի Եւրոպա: Առաւել եւս, որ այդ իմաստով, իհարկէ, թէ' Եւրոպայի, թէ' մասնաւորապէս Գերմանիայի հետաքրքրութիւնն Իրանի նկատմամբ բաւականին ակնառու է եւ միեւնոյն ժամանակ նաեւ նկատելի է այն ռեգիոնալ հաւակնութիւնները, որ ունի Պեռլինը Կովկասի նկատմամբ:*

*Ահա այդ իմաստով Երեւանը թաւշեայ յեղափոխութիւնից յետոյ նոր հնարաւորութիւններն անկասկած պէտք է օգտագործի Իրանի հետ յարաբերութեանը նոր որակ եւ ընդգրկում տալու համար: Իհարկէ, միամիտ կը լինի կարծել, որ Փաշինեանի առաջին այցը Թեհրան կարող է բեկումնային լինել այդ առումով, սակայն տեւեալ պարագայում շատ էական կարող է լինել այն, թէ ինչպիսի յայտարարութիւններ կը հնչեն Թեհրանում: Յատկապէս Գերմանիա այցի ընթացքում յայտարարութիւնների ֆոնին, որոնց քաղաքական բովանդակութիւնն ու որակը բաւականին բարձր էր եւ նշանակալից ռեգիոնալ ռազմա-*

Շար.ը էջ 4

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ
ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

# ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

## Պիտի Նշանակուի Սփիւռքի Գծով Յատուկ Յանձնարարութիւններու Դեսպան

*Հայաստանի Հանրապետութեան վարչապետի աշխատակազմը պիտի ունենայ Սփիւռքի գիծով յատուկ յանձնարարութիւններու դեսպան, որ պիտի ըլլայ Սփիւռքի հետ յարաբերութիւններու մէջ վարչապետի աշխատակազմի ներկայացուցիչը: Այս մասին Քէօլնի մէջ հայ համայնքի հետ հանդիպման ժամանակ ըսած է վարչապետ Նիկոլ Փաշինեանը՝ պատասխանելով համայնքի ներկայացուցիչներու հարցերուն:*

*Վարչապետը նկատած է, որ Սփիւռքի նախարարութեան գործառոյթները պէտք է վերաբաշխուին: «Օրինակ, սփիւռքի նախարարութիւնը մշտապէս արտերկրում հայկական կրթօճախների համար ուղարկում էր դասագրքեր, բայց Սփիւռքի ուսուցիչների վերապատրաստումն իրականացնում էր կրթութեան եւ գիտութեան նախարարութիւնը:*

*Ստացւում է, որ այդ դասագրքի օգտագործումը եւ ուսուցիչների վերապատրաստումը դառնում է ոչ արդիւնաւէտ:*

*Կառավարութեան կազմի կրճատման մեր ամբողջ նպատակը հետեւեալն է՝ ամէն գործառոյթով պէտք է զբաղուի մէկ մարմին: Կրթութեան հարցով զբաղուողը պէտք է լինի կրթութեան եւ գիտութեան նախարարութիւնը: Այս հանգամանքների բերումով Սփիւռքում մենք հայկական կրթութեան մի քաղաքականութիւն ենք վարում, իսկ Հայաստանում՝ մէկ այլ: Նոյնն էլ մշակոյթի ոլորտում»,- նշած է վարչապետը: Ան ընդգծած է, որ քաղաքականութեան անկիւնաքարը պէտք է ըլլայ Սփիւռքի եւ Հայաստանի հայու ինքնութիւնը իրար մօտեցնելը:*

*«Ըստ էութեան մեր պատկերացումը հետեւեալն է՝ սփիւռքի նախարարութեան գործառոյթները պէտք է վերաբաշխուեն: Յատուկ յանձնարարութիւններով դեսպանը ոչ մի անելիք չի ունենայ՝ բացի Սփիւռքի հետ կապուած հարցերը հաւաքելուց, լուծումների վերաբերեալ առաջարկներ ներկայացնելուց եւ վարչապետի միջոցով այդ լուծումներն իրականացնելուց»,- յայտարարած է Փաշինեան:*

## Սա Գործընթաց Է, Որ Արդէն Իսկ Սկսած Եմ. Ալեն Սիմոնեանը Օրհներգը Փոխելու Մասին

*ԱԺ փոխնախագահ Ալեն Սիմոնեանը խորհրդարանէն ներս լրագրողներուն հետ զրոյցի ժամանակ ըսած է, որ հիմնը փոխելու իր նախաձեռնութիւնը ԱԺ օրակարգ ընդգրկելու մասին հարց չի քննարկուիր:*

*«Ես բազմիցս ասել եմ, որ դա օրակարգում չկայ, դրա մասին խօսուել է հանրային քննարկում սկսելու համար: Եւ ես համարում եմ, որ հանրային քննարկումն ստացուել է աւելի քան: Հանրութիւնն իր հետեւութիւններն արել է»,- ըսած է ան:*

*Ըստ Ալեն Սիմոնեանի՝ իր հետեւութիւնը հետեւեալն է՝ գործող օրհներգը այնուամենայնիւ ՀՀ բնակչութեան մեծ մասին սրտով չէ: Այլ հարց է, որ մէկը Արամ Խաչատրեանի, միւսը՝ Շարլ Ազնաւուրի կամ Տիգրան Մանսուրեանի տարբերակը կը հաւնի: Բայց մէկ բան, ըստ անոր, պարզ է, որ մենք գործող օրհներգի հարցի վերաբերեալ ազգային համաձայնութիւն չունենք»:*

## Հայաստանի Պետական Պարտքը Մօտեցած Է 7 Միլիառ Տոլարի Շեմին

*2018 Թուականի Դեկտեմբերի վերջի դրութեամբ Հայաստանի պետական պարտքը կազմած է 6 միլիառ 922,895 միլիոն ԱՄՆ տոլար: 2017 Թուականի Դեկտեմբերի վերջին պետական պարտքը կազմած էր 6 միլիառ 774,602 միլիոն տոլար: Ինչպէս կը տեղեկացնէ ՀՀ վիճակագրական կոմիտէն, 2018 Թուականի Նոյեմբերին համեմատ դեկտեմբերին պետական պարտքը աճած է 157,395 միլիոն տոլարով:*

*Հայաստանի արտաքին պարտքը նախորդ տարեվերջի դրութեամբ կազմած է 5 միլիառ 532,881 միլիոն տոլար, որ Նոյեմբերի համեմատ աճած է 137,088 միլիոն տոլարով:*

*Հայաստանի արտաքին պարտքին 4 միլիառ 982,837 միլիոն տոլարը կառավարութեան պարտքն է, մնացածը՝ Կեդրոնական դրամատան:*

*Դրամային արտայայտութեամբ Հայաստանի պետական պարտքը Դեկտեմբերի վերջի դրութեամբ կազմած է 3 Թրիլիոն 348 միլիառ 950,6 միլիոն դրամ, այդ շարքին՝ արտաքին պարտքը՝ 2 Թրիլիոն 676 միլիառ 531,4 միլիոն դրամ:*

## Հայաստանի Մշտական Բնակչութեան Թիւը՝ Մօտ Երեք Միլիոն

*Այս տարուան Յունուար 1-ի դրութեամբ Հայաստանի մշտական բնակչութեան թուաքանակը կազմած է 2 միլիոն 965,1 հազար մարդ՝ 2018 Թուականի նոյն ժամանակահատուածին 2 մլն 972,7 հազարի փոխարէն: Մշտական բնակչութեան թիւը մէկ տարուան մէջ նուազած է 7,6 հազարով: Այս տուեալները հրապարակած է ՀՀ վիճակագրական կոմիտէն:*

*Այս տարուան Յունուարի դրութեամբ 1 միլիոն 894,5 հազար մարդ ապրած է՝ քաղաքային, 1 միլիոն 070,6 հազար մարդ՝ գիւղական բնակավայրերու մէջ:*

*Մշտական բնակչութեան միջին տարիքը 2018 Թուականի տարեսկիզբի դրութեամբ կազմած է 36,5 (2017Թ.՝ 36,2) տարի, տղամարդոց համար՝ 34,5, իսկ կանանց համար՝ 38,2 տարի:*

*Հայաստանի մէջ նուազած է ծնունդներու թիւը: Եթէ 2016 Թուականին ծնածներուն թիւը կազմած էր 40, 592 մարդ, 2017-ին՝ 37, 700, ապա 2018-ին այն կազմած է 36, 502 մարդ:*

*Նուազած են նաեւ մահերը, եթէ 2017 Թուականին մահերու տարեկան թիւը կազմած էր 27 157, ապա 2018-ին կազմած է 25 645 մարդ:*

## Եթէ ԱԱԾ-Ն Դառնայ Նախարարութիւն, Կը Քաղաքականացուի. Վանեցեան

*«Ես կ'ենթարկուեմ ցանկացած քաղաքական որոշման: Եթէ որոշուի, որ Ազգային անվտանգութեան ծառայութիւնը (ԱԱԾ) պէտք է դառնայ նախարարութիւն, իհարկէ, ես պարտաւոր եմ ենթարկուել այդ որոշմանը, բայց նաեւ ուզում եմ ասել, որ ամէն դէպքում, նախարարը քաղաքական պաշտօն է: Եթէ ԱԱԾ նախարարը լինի քաղաքական գործիչ ու զբաղուի քաղաքականութեամբ, փորձելու է, ուզի թէ չուզի, փորձելու է առաջ տանել իրենց քաղաքական ուժին, քաղաքականացուելու է», - ըսած է Արթուր Վանեցեանը:*



Ազգային անվտանգութեան ծառայութեան պետ՝ Արթուր Վանեցեան

*Լրագրողներու դիտարկման, թէ այս պարագային կը ստացուի, որ բանակը քաղաքակա՞ն է, ԱԱԾ տնօրէնը արձագանգած է. «Բանակը նախարար ունի, բայց ունի նաեւ Գլխաւոր շտաբի պետ, որը որեւէ կապ չունի քաղաքականութեան հետ ու իրականացնում է զօրքի անմիջական ղեկավարումը»:*

*Լրագրողները հետաքրքրուած են նաեւ «Երեւան հիմնադրամի» կողմէն պետական պիւտճէ ուղղուած գումարներէն, ինչին ի պատասխան ըսած է. «Գործի շրջանակներում հիմնաւորուել է 1 միլիառ 807 միլիոն դրամի կորուստ, որն ամբողջութեամբ վերականգնուել է պետպիւտճէ «Երեւան հիմնադրամի» կողմից»:*

*Անդրադառնալով ՀՀ երկրորդ նախագահ Ռոպերթ Քոչարեանի ընտանիքին պատկանող պիզնեսներուն մասին իր նախապէս ըրած յայտարարութեան՝ ըսած է. «Ինչ վերաբերւում է իմ յայտարարութեանը՝ Քոչարեանի ընտանիքին պատկանող պիզնեսների հետ կապուած, ապա քրէական գործ կայ յարուցուած, իրականացւում է քննութիւն եւ արդիւնքների մասին կը լինի համապատասխան յայտարարութիւն ԱԱԾ քննչական բաժնի կողմից»:*

## «Ջիպիլիքս»-ի Գործով 11 Մեղադրեալներ Տուգանքներու Ենթարկուեցան

*Երեւանի ընդհանուր իրաւասութեան դատարանը՝ դատաւոր Տաթեւիկ Գրիգորեանի նախագահութեամբ, հրապարակած է «Ջիպիլիքս»-ի գործով դատավճիռը:*

*11 մեղադրեալներէն Երեւանի նախկին քաղաքապետ Տարօն Մարգարեանի Կոմիտասի 56 հասցէի վրայ տեղակայուած նախընտրական շտապի պետ, հանրապետական Հրայր Անտոնեանին եւ «ՍԱՍ» հանրախանութներու ցանցի տնօրէն Ստեփան Սահակեանին նկատմամբ դատարանը սահմանած է տուգանք՝ 2 միլիոն 500 հազարական դրամի չափով: Մինչդեռ մեղադրող դատախազ Հայկ Պետրոսեանը միջնորդած էր 3-ական տարուան ազատազրկման դատապարտել Հրայր Անտոնեանը եւ Ստեփան Սահակեանը:*

*Գործով անցնող միւս 9 ամբաստանեալները ստացած են տարբեր չափերու տուգանք:*

*2017 Թուականի 14 Մայիսին Երեւանի աւագանիի ընտրութիւններու քարոզչութեան վերջին օրը «Ելք» դաշինքը իրաւապահներուն «յանցագործութեան մասին հաղորդում» ներկայացուցած էր՝ անոր կցելով հանրապետական Տարօն Մարգարեանի նախընտրական շտապի մօտ տեղադրուած աղբամաններէն յայտնաբերուած գայթակղային փաստաթուղթեր, որոնք, ընդդիմադիր դաշինքի պնդմամբ, կը վկայէին, որ այն ժամանակ իշխող Հանրապետականի կողմէն ընտրակաշառքի բաժանումը կրած է համակարգուած եւ կեդրոնացուած բնոյթ:*

*Քրէական գործը դեռ 2017 Թուականի Յուլիսին կարճուած էր՝ յանցակազմի բացակայութեան հիմքով: «Ելք»-ը բողոքարկած էր Յատուկ քննչական ծառայութեան որոշումը, եւ 2018-ի Յունիսի սկզբը գործը վերաբացուած էր:*

*Գործով անցնող բոլոր ամբաստանեալները ընդունած են իրենց առաջադրուած մեղադրանքները:*

## Պետական Համակարգի Աշխատավարձերը Պէտք Է Մօտեցնել Մասնաւորի Ոլորտին. Աւինեան

*ՀՀ փոխվարչապետ Տիգրան Աւինեանի կարծիքով, պետական համակարգի աշխատավարձերը մրցունակ դարձնելու կարիք կայ:*

*«Ես կարծում եմ, որ քաղաքական ծառայութեան համակարգի ընդհանուր վերանայման կարիք կայ եւ բարոյական կողմի վրայ, այո, միանշանակ պէտք է ուշադրութիւն դարձնենք, բայց եթէ մենք ուզում ենք կայացնել իրապէս մրցունակ պետական համակարգ, մենք պէտք է քաղաքական ծառայութեան համակարգը վերանայենք, ինչպէս նաեւ պետական համակարգում աշխատավարձերը գոնէ մօտեցնենք մասնաւոր հատուածին եւ սարքենք մրցունակ, որպէսզի լաւագոյն քադրերը ինչ-որ մի փուլում չգնան մասնաւոր հատուած», - յայտարարած է Տիգրան Աւինեանը՝ պատասխանելով լրագրողներէն մէկուն այն հարցին, թէ արդեօք իշխանութիւնները չեն պատրաստուիր որոշակի սահմանափակումներ մտցնել պաշտօնեաներու պարգեւավճարներու հարցին վերաբերեալ:*

*Տարեվերջին պետական մարմիններու կողմէ պարգեւավճարներու՝ այսպէս կոչուած «13-րդ աշխատավարձի» վճարման մասին տեղեկութիւնները այս օրերուն մեծ քննադատութեան տեղիք տուած են ընկերային ցանցերու եւ լրատուամիջոցներու մէջ: Աղքատութեան եւ գործազրկութեան ֆոնին այդ բարձր պարգեւավճարները շատերը դիտարկած են որպէս քաղաքացիներու հարկերէն գոյացող միջոցներու վատնում:*

# ԼՈՒՐԵՐ

## Մոսկուան SU-30 Կործանիչներ Վաճառած է Երեւանին՝ Ռուսաստանի Ներքին Գիներով



Ռուսական SU-30 կործանիչ

Ռուսաստանը Հայաստանին վաճառած է չորս SU-30 կործանիչներ՝ Ռուսաստանի ներքին գիներով, գրած է ռուսաստանեան «Քոմերսանթ» պարբերականը՝ «Ռուսաստանը Հայաստանին կործանիչներ վաճառած է, ինչպէս ինքն իրեն» վերնագրով յօդուածին մէջ:

Մոսկուան ու Երեւանը չորս կործանիչներու վաճառքի մասին պայմանագիր կնքած են, Հայաստանը այդ կործանիչները պիտի ստանայ 2020 թուականին, գրած է թերթը: «Քոմերսանթի» տեղեկութիւններով, համաձայնագիրը կնքելու համար Ռուսաստանը գացած է լուրջ զիջումներու՝ ոչ միայն վարկ կնքած է, այլ նաեւ կործանիչները վաճառած է ներքին գիներով:

Գործարքը շատ կարեւոր է հայկական կողմին համար, քանի որ տասնամեակներու ընթացքին առաջին անգամ Երեւանը ձեռք բերած է բոլորովին նոր, արդիական ռազմական օդանաւեր:

«Քոմերսանթը» գրած է, որ գործարքի մասին յայտարարած է Հայաստանի պաշտպանութեան նախարարութիւնը, սակայն այդ տեղեկութիւնը մեկնաբանելու՝ «Ազատութեան» խնդրանքին Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան մամուլի խօսնակ Արծրուն Յովհաննիսեանը արձագանգած էր՝ ինչպէս յայտարարած է պաշտպանութեան նախարար Դաւիթ Տօնոյեանը, մենք կ՛աշխատինք SU-30-ներու ձեռք բերման ուղղութեամբ, երբ որ կ՛ըլլան առարկայական արդիւնքներ, մենք անոնց մասին պիտի յայտարարենք:

«Քոմերսանթ»ը գրած է, որ հայ օդաչուներն ու մասնագէտները համապատասխան վերապատրաստում պիտի անցնին Ռուսաստանի ռազմական կառոյցներուն մէջ:

Ռուսական թերթը նաեւ գրած է, որ կործանիչները ձեռք բերելու մասին Հայաստանը պայմանաւորուած է Ռուսաստանի հետ դեռ 2012 թուականին, սակայն ֆինանսական խնդիրներու պատճառով գործարքը, որմով Երեւանը կ՛ուզէր ձեռք բերել 12 կործանիչ, չէր կայացած:

Թերթը գրած է, որ այս հարցը Հայաստանի եւ Ռուսաստանի ղեկավարները քննարկած են Սեպտեմբերին կայացած հանդիպման ժամանակ, հայկական կողմը ուզած էր ձեռք բերել 6 կործանիչ, սակայն համաձայնած են 4-ի շուրջ:

## Մնացականեանը Պարզաբանած է Փաշինեանի Յայտարարութիւնը



Հայաստանի արտաքին գործոց նախարար Զոհրապ Մնացականեան

Հայաստանի արտաքին գործոց նախարար Զոհրապ Մնացականեանը լրագրողներու հարցին ի պատասխան պարզաբանած է վարչապետ Նիկոլ Փաշինեանի Գերմանիոյ մէջ ըրած այն յայտարարութիւնը, թէ Ղարաբաղեան հակամարտութիւնը ունի երեք կողմ:

Ըստ Զոհրապ Մնացականեանի, պէտք է ուշադրութիւն դարձնել ոչ թէ բառակապակցութիւններուն, այլ էութեան:

Գերմանիոյ վարչապետ Անկելա Մերքէլի հետ համատեղ ասուլիսին Փաշինեանը խօսած էր Ղարաբաղեան հակամարտութեան մէջ ներգրաւուած երեք կողմերու մասին. - «Ինչ վերաբերում է բուն կարգաւորմանը, կարծում եմ, համանախագահող երկրները, նաեւ միջազգային հանրութիւնը յստակ արձանագրել է, որ լուծման խնդիրը հենց հակամարտութեան մէջ ներգրաւուած երեք կողմերի օրակարգի հարցն է: Եւ միջազգային հանրութիւնը չի կարող հակամարտութեան երեք կողմերի փոխարէն լուծել հակամարտութիւնը»:

Լրագրողներու յամառ հարցերուն, թէ որոնք են հակամարտութեան կողմերը, Մնացականեանը արձագանգած էգ - «Դուք, խնդրում եմ, աւելի ուշադրութիւն դարձրէք էութեանը: Որովհետեւ, եթէ բառակապակցութիւններին էք կպնում գգգ Պարոն Փաշինեանը ասել է այն, ինչ ոչ ասել էգգգ կայ երեք կողմ: Հայաստանը ունի իր մասը, Հայաստանը երաշխաւորն է Ղարաբաղի անվտանգութեան, Հայաստանը մասնակցում է բանակցութիւններին, Հայաստանը շարունակելու է այդ ամէնը անել»:

Անցած շաբաթ Ատրպէյճանի արտաքին գործոց նախարութիւնը արձագանգած էր Նիկոլ Փաշինեանի այն յայտարարութեան, թէ իր կառավարութիւնը չի կրնար նոյնիսկ քննարկել «տարածքներ խաղաղութեան դիմաց» բանաձեւը: Պաշտօնական Պաքուն Փաշինեանի այդ տրամաբանութիւնը անհասկնալի որակած էր՝ պնդելով, թէ «ԵԱՀԿ Մինսքի խումբի հովանիի ներքոյ իրականցուող բանակցութիւններու հիմքը ինկած է հայկական ուժերու դուրսբերումը Ատրպէյճանի գրաւեալ տարածքներէն»:

«Այս պարագայում հարց է առաջանում՝ արդեօ՞ք Փաշինեանի այդ յայտարարութիւնը չի նշանակում բանակցութիւններից հրաժարում», - ընդգծած էր Ատրպէյճանի արտաքին գրծոց նախարարութիւնը:

Հայաստանի արտգործնախարար Զոհրաբ Մնացականյանը, ի պատասխան այս հայտարարութեան, շեշտեց, որ Հայաստանը շարունակում է իր աշխատանքները:

Հարցին, թէ երբ կը նախատեսուի Իլհամ Ալիեւ - Նիկոլ Փաշինեան պաշտօնական հանդիպումը, Զոհրապ Մնացականեանը կարճ արձագանգած է՝ պաշտօնական հանդիպման համար չշտապենք. - «Շատ էական է, որպէսզի մենք շարունակենք կառուցել էս գործընթացը այնպէս, որ մենք յոյս ունենանք, որ կարողանանք արդիւնք ունենալ: Ժամկէտային հարցերը նշանակութիւն ունեն, բայց առաջնայինը՝ վստահ լինել, որ յաջորդ քայլը նախապատրաստես այնպէս, որպէսզի մենք տինամիքան կարողանանք պահպանել»:

«Ազատութեան» հարցին, թէ կը պահպանուի արդեօք այդ կառուցողական մթնոլորտը, արտաքին գործոց նախարարը պատասխանած է. - «Յոյսով եմ, որ չեմ սխալւում, որ այո»:

## Աշխարհի մէջ Ամենաանվտանգ Երկիրներու Շարքին Հայաստանը 62-րդն է

Global Finance ամսագիրը կազմած է աշխարհի մէջ ամենաանվտանգ երկիրներու վարկանշային ցուցակը, որ հրապարակուած է հրատարակչութեան կայքին մէջ:

«Ռիա Նովոսթին» կը գրէ, որ այն կազմուած է հաշուի առնելով հետեւեալ չափանիշները՝ ռազմական հակամարտութեան հաւանականութիւնը, քաղաքացիներու անվտանգութեան համար սպառնալիքի մակարդակը, տնտեսական զարգացման մակարդակը, բնական աղէտի հաւանականութիւնը:

Վարկանշային ցուցակին մէջ Հայաստանը 62-րդ տեղը կը գրաւէ: Տարածաշրջանային երկիրներէն Վրաստանը 49-րդ տեղը կը զբաղեցնէ, Ատրպէյճանը՝ 71-րդ, Իրանը՝ 77-րդ, Թուրքիան՝ 107-րդ:

Ռուսաստանը ցուցակի 108-րդ հորիզոնականին վրան է, ԱՄՆ-ը՝ 65-րդ: Առաջին տեղը կը գրաւէ Իսլանտան, երկրորդ՝ Զուիցերիան, երրորդ՝ Ֆինլանտան: Առաջին տասնեակին մէջ է նաեւ Փորթուկալը, Աւստրիան, Նորվեկիան, Քաթարը, Սինկափուրը, Դանիան եւ Նոր Զելանտան: Ամենավտանգաւոր երկիրներն են Կուաթիմալան, Եմէնն ու Ֆիլիփինները:

Վարկանշային ցուցակին մէջ ընդգրկուած է 128 երկիր:

## Թեհրանում Ակնկալւում է Շարունակութիւն

Շարունակուած էջ 1-էն

քաղաքական հեռանկարների առումով: Այդ իմաստով կայ իրանեան այցում ակնկալուող շարունակութիւն, եթէ նկատի առնենք եւ այն, որ Հայաստանի հետ յարաբերութիւնն ու ընդգրկման լայն ներուժը՝ սկզբի համար թէկուզ առնուազն Հայաստան-Վրաստան-Իրան շրջանակում, Թեհրանի համար անհրաժեշտ եւ շահեկան է միւս ռեգիոնալ ֆորմատներում ճկունութեան համար, ինչը, բնականաբար, կը բխի նաեւ Հայաստանի շահից ու անվտանգութիւնից՝ նկատի ունենալով, թէ Իրանն ում հետ գործ ունի ռեգիոնալ միւս եռակողմ ֆորմատներում:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

## Freedom House

Շարունակուած էջ 1-էն

աջակցիլ փտածութեան դէմ պայքարին, թափանցիկ աշխատելաոճին, հաշուետուողականութեան»,- ըսուած է զեկոյցին մէջ:

Դիտարկելով հայաստանեան զարգացումները՝ կազմակերպութիւնը նշած է՝ սա պայծառ շող էր աշխարհի մէջ՝ ժողովրդավարութեան գլխուն կուտակուող մռայլ միջավայրին մէջ:

Տարածաշրջանին մէջ Հայաստանի հետ միասին նաեւ Վրաստանը «մասամբ ազատ» երկիրներու շարքին մէջ, իսկ Թուրքիան, Իրանը եւ Ատրպէյճանը, ինչպէս նաեւ Ռուսաստանը, կը դասուին «ոչ ազատ» երկիրներու շարքին:

2018 թուականին ժողովրդավարութեան առումով յառաջընթաց արձանագրած երկիրներէն են նաեւ Անկոլան, Էքուատորը, Եթովպիան, Մալայզիան: Դիտարկուած 195 երկիրներու շարքին ազատութեան առումով ամենաբարձր գնահատականը ստացած են Նորվեկիան, Շուէտը, Ֆինլանտան, ամենաանազատներն են Սուրիան, Հարաւային Սուտանը, Թուրքմէնստանը, Հիւսիսային Քորէան, Տաճիկստանն ու Ուզպէքիստանը:

## Համաշխարհային Համաժողովը Հայաստան Պիտի Բերէ ՏՏ Հսկաներու՝ Google-ի, Amazon-ի եւ Facebook-ի




Հայաստանի մէջ 6-9 Հոկտեմբերին իրականացուելիք «Տեղեկատուական արհեստագիտութիւններու համաշխարհային համաժողով»-ին մասնակցութիւն պիտի ունենան Google-ի, Amazon-ի եւ Facebook-ի ղեկավարութիւնները: Ինչպէս կը հաղորդէ «Արմէնփրես»-ը՝ վկայակոչելով «Սփութնիք-Ղազախստանը», այս մասին յայտարարած է ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորեանը, որ Ալմաթիի մէջ կը մասնակցի Եւրասիական միջկառավարական խորհուրդի նիստէն առաջ իրականացուող «Թուային օրակարգը համաշխարհայնացման դարաշրջանին. Եւրասիական նորարարական էքօհամակարգ» համաժողովին:

«Ուզում եմ բոլոր ցանկացողներին հրաւիրել այս լուրջ միջոցառմանը. Հոկտեմբերի 6-9-ը Երեւանում կը կայանայ «Տեղեկատուական թեխնոլոկիաների համաշխարհային համաժողովը»: Կը լինեն Google-ի, Amazon-ի եւ Facebook-ի եւ այլ ընկերութիւնների ղեկավարութիւններ: Հետաքրքիր հարթակ կը լինի մեր հերթական հանդիպման համար»,-ըսած է Գրիգորեանը:

Փոխվարչապետ Մհեր Գրիգորեանը Երեւան հրաւիրած է նաեւ Ալմաթիի մէջ «Թուային օրակարգը համաշխարհայնացման դարաշրջանին 2. Եւրասիական նորարարական էքօհամակարգ» համաժողովի մասնակիցները:

Երեւանի մէջ պիտի կառուցուի նաեւ «Ճարտարապետական քաղաք», որ պատրաստ պիտի ըլլայ 2020-ի Փետրուարին:

## Երեւանի մէջ Պիտի Կառուցուի Նորարարութեան Կեդրոն՝ 6000 Աշխատատեղերով




Երեւանի մէջ պիտի կառուցուի նորարարութեան եւ արհեստագիտութիւններու տարածաշրջանային կեդրոն, որ Անկախ պետութիւններու համագործակցութեան (ԱՊՀ) եւ Արեւելեան Եւրոպայի երկիրներու շրջանին կառուցուող առաջին բազմաճիւղ պարկը պիտի ըլլայ ՏՏ-ին (Տեղեկատուական արհեստագիտութեան) զուգահեռ ներկայացուած ոլորտներու եւ ընկերութիւններու աշխարհագրութեան տեսանկիւնէ:

«Կալաքսի» ընկերութիւններու խումբի տարածած հաղորդագրութեան համաձայն, պարկը կը նախատեսուի ճարտարապետական, ֆինանսական, դրամատնային, առողջապահական, ապահովագրական, ռազմական, գիւղատնտեսական, հանքաարդիւնաբերական, մեդիա եւ հեռահաղորդակցութեան ոլորտներու մէջ նորարարական լուծումներ առաջարկող ընկերութիւններու համար՝ աւելի քան 6000 աշխատատեղերով:

Պարկին մէջ ներկայացուած պիտի ըլլան «սթարթ-ափներ»ու դրամագլուխ ապահովող ֆոնտեր:

Ծրագրի նախաձեռնութիւնը կը կատարէ «Կալաքսի» ընկերութիւնները, որու կազմին մէջ կը մտնեն, մասնաւորապէս, ՏՏ (Տեղեկատուական արհեստագիտութեան) ոլորտի առաջատար Ucom եւ iunetworks ընկերութիւնները:

## Փաշինեանը Բաւարարուած է

Շարունակուած էջ 1-էն

խնդիրներու մասին:

«Ըստ էութեան խօսեցինք նաեւ տարածաշրջանային իրավիճակի մասին, միջազգային օրակարգին վերաբերող հարցերից, եւ ուրախ եմ արձանագրել, որ մենք այդ հարցերի վերաբերեալ ունենք փոխադարձ ըմբռնում: Իհարկէ մեր տարածաշրջանում կայունութեան եւ խաղաղութեան հարցերը չափազանց կարեւոր են, բայց իհարկէ նաեւ կարեւոր է արձանագրել, որ այդ խաղաղութիւնը եւ կայունութիւնը պէտք է լինեն բազմակողմ ջանքերի արդիւնք:

Մենք խօսել ենք նաեւ ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման ընթացիկ իրավիճակի վերաբերեալ եւ այս արձանագրումը նոյնպէս այդ համաթեքսթում արուել է, որ պէտք է լինի գործընթացը երկկողմանի եւ չի կարող այդ գործընթացը տեղի ունենալ միակողմանիութեան տրամաբանութեան մէջ», -ըսած է Նիկոլ Փաշինեանը:

Ինչպէս հաղորդած է «Արմէնփրես»-ի թղթակիցը Պերլինէն, Մերքէլ իր նստավայրին մէջ զինուորական պատիւներով ընդունած է Հայաստանի վարչապետը: Ձեռքսեղմումէն, պատուիրակութիւններուն ողջունելէ ետք հնչած են երկու պետութիւններու պաշտօնական օրհներգերը, ՀՀ վարչապետն ու Գերմանիոյ վարչապետը կատարած են պատուոյ պահակախումբի ստուգայց:

## Իսրայէլի Կառավարութիւնը Վերցուցած է

Շարունակուած էջ 1-էն

րութիւնը կասեցուցած է ընկերութեան՝ արտահանման թոյլտուութիւնները:

Aeronautics-ը Փետրուար 4-ին Tel Aviv Stock Exchange-ին տեղեկացուցած է, որ «Իր «Օրպիթըր 1K կամիկաձէ» անօդաչու թռչող սարքը կեդրոնական A գնորդին վաճառելու արգելքը հանուած է: «Պաշտպանութեան նախարարութիւնը ընկերութեան յայտնած է, որ ան արտահանման արգելքը հանուած է: Ընկերութիւնը հնարաւորին չափ շուտ կրնայ շարունակել անօդաչու թռչող սարքեր վաճառել վերը նշուած գնորդին»,- ըսուած է ընկերութեան յայտարարութեան մէջ:

Aeronautics ընկերութիւնը նաեւ հաստատած է, որ ընկերութեան գլխաւոր տնօրէնի, փոխտնօրէնի եւ եւս մէկ բարձրաստիճան ներկայացուցչի արտահանման թոյլտուութիւնները կասեցուած են՝ սկսած 3 Ապրիլէն: «Ժամանակաւոր կասեցումը պիտի գործէ մինչեւ աշխատակիցներուն մեղադրանք առաջադրելու կամ չառաջադրելու որոշման ընդունումը: Երբ այդ որոշումը կայացուի, ժամանակաւոր կասեցման որոշումը պիտի վերանայուի»,- նշուած է ընկերութեան յայտարարութեան մէջ:

## Մայր Աթոռի Պատուիրակները Հանդիպած են

Շարունակուած էջ 1-էն

մասներ պատմած է, թէ ինչպէս կազմակերպուած է Նախարար Չաւուշօղլուի հետ հանդիպումը. - «Վեհափառը ցանկացաւ, որպէսզի ես Թրքական կողմին ներկայացնեմ այս հարցի շուրջ իր տեսակէտը: Հռոմի մէջ գտնուելու ժամանակ այցելեցի Թուրքիոյ դեսպանին եւ փոխանցեցի Թուրք Արտաքին գործոց նախարարի հետ հանդիպելու ցանկութիւնը: Դեսպանն ալ շատ դրական արձագանգեց եւ ըսաւ, որ կը փոխանցէ նախարարին: Այնուհետեւ ինձ զանգահարեց եւ յայտնեց, որ նախարարը հանդիպման օր նշանակած է: Ես ալ այս զարգացումներուն մասին տեղեկացուցի կաթողիկոս Գարեգին Բ-ին»:

Ամփոփելով Թուրքիոյ Արտաքին գործոց նախարար Մեւլութ Չաւուշօղլիի հետ շուրջ մէկ ժամ տեւած հանդիպումը՝ արք. Պարսամեանը նշած է. - «Նախարարը մեզ շատ ջերմ ընդունեց, ես ալ շատ յստակ ներկայացուցի մեր նպատակը, այն է՝ ոչ թէ դուրսէն միջամտել գործընթացին, այլ ներկայացնել մեր մտահոգութիւնները, եւ եթէ ինչ-որ կերպ կրնանք աջակցիլ, պատրաստ ենք մեր ներդրումը ունենալու: Նախարարն ալ նշեց, որ սա ներքին հարց է, պետութիւնն ալ կ՛ուզէ պատրիարքական ընտրութիւններ, սակայն պէտք է քիչ մըն ալ համբերել: Զգացի, որ անոր խօսքերը անկեղծ են»:

Խաժակ Սրբազանը աւելցուցած է, որ իր տպաւորութեամբ պետութիւնը կը ցանկայ, որպէսզի այս գործընթացը հնարաւորինս խաղաղ անցնի եւ ներհամայնքային լարուածութիւն չառաջանայ:

Վերջին տասնամեակին Պոլսոյ Հայոց նոր պատրիարքի ընտրութեան հարցը Պոլսոյ հայ համայնքի օրակարգին մէջ է: Պատրիարք Մեսրոպ Մութաֆեանը 2008-էն անբուժելի հիւանդ է եւ փաստացիօրէն չի կրնար կատարել իր պարտականութիւնները: Թրքական իշխանութիւնները, սակայն, չեն արտօներ նոր Պատրիարքի ընտրութիւն իրականացնելը՝ այն հիմնաւորմամբ, թէ Մեսրոպ Մութաֆեանը դեռ ողջ է, անոր առողջական խնդիրները պատրիարքական աթոռը թափուր ճանչնալու պատճառ չեն համարուիր, հետեւաբար ընտրութեան համար անհրաժեշտ պայմաններ չկան:

www.massisweekly.com

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

## Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Գանատահայոց Թեմ Կարեւոր Յայտարարութիւն




Ուրախ ենք յայտարարելու, որ Երեքշաբթի, Յունուար 29, 2019-ին, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Գանատահայոց Թեմը ի գործ դրաւ իր իրաւունքը՝ գնելու 930 Progress Avenue, Scarborough, ON-ի վրայ գտնուող Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան (ՀԲԸՄ)-ի շէնքը:

Նոյեմբեր 11, 2018-ի Ս. Երրորդութիւն Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Ընդհանուր Անդամական յատուկ ժողովը գումարուեցաւ հովանաւորութեամբ՝ Գանատահայոց Թեմի Առաջնորդ, Գերշ. Տէր Աբգար Եպս. Յովակիմեանի: Սոյն ժողովը յանձնառու դարձուց Ծխական Խորհուրդի կողմէ նշանակուած յանձնախումբը, «ՀԲԸՄ Արմէն Օնթարիոյի եւ Centennial College-ի միջեւ առ ու ծախի համաձայնութեան գծով ապահովելու պէտք եղած գումարը եւ մինչեւ 29 Յունուար 2019 իրագործելու կառոյցը գնելու իր առաջին իրաւունքը»:

Նշանակուած յանձնախումբի անդամները, գլխաւորութեամբ՝ Գանատահայոց Թեմի Փոխ-Առաջնորդ եւ Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տէր Զարեհ Ա. Քհնյ. Զարգարեանի, կը բաղկանան հետեւեալներէն. Օհան Օհաննէսեան՝ Թեմական Խորհուրդի ատենապետ, Ռոզին Իմաստունեան՝ Ծխական Խորհուրդի ատենապետուհի, Ժագ Ստեփանեան՝ ատենապետ Հոգաբարձութեան եւ նախկին ատենապետ Թեմական Խորհուրդի, Արա Պոյաճեան՝ նախկին ատենապետ Թեմական Խորհուրդի եւ Եկեղեցւոյ Շինութեան Յանձնախումբի:

Յետ երկարատեւ եւ մանրակրկիտ աշխատանքի, Յունուար 23, 2019-ին, Յանձնախումբը Ծխական Խորհուրդին, Եկեղեցւոյ Պատգամաւորներուն, Թեմական Խորհուրդին եւ Թեմական Կալուածոց Մարմնին ներկայացուց իր ուսումնասիրութեան արդիւնքները եւ թելադրութիւնները եւ ստացաւ ներկաներու բացարձակ համաձայնութիւնը ձեռք բերուած արդիւնքները փոխանցելու Եկեղեցւոյ Անդամական յատուկ ժողովին:

Յանձնախումբը կը շարունակէ յանձնառու ըլլալ ամբողջացնելու վերոյիշեալ գնման ծրագիրը մինչեւ Փետրուար 28, 2019: Մանրամասնութիւնները պիտի ներկայացուին յառաջիկային գումարուելիք եկեղեցւոյ տարտու անդամներու յատուկ ժողովի ընթացքին:

***ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ***, *Հայց. Առաք. Սուրբ Եկեղեցւոյ Գանատահայոց Թեմի*

***ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ***, *Սուրբ Երրորդութիւն Հայց. Առաք. Եկեղեցւոյ*

***ԿԱԼՈՒԱԾՈՑ ՄԱՐՄԻՆ***, *Հայց. Առաք. Սուրբ Եկեղեցւոյ Գանատահայոց Թեմի*

*Յունուար 29, 2019 - Թորոնթօ*

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս»
Շաբաթաթերթին
T: (626) 797-7680
massis2@earthlink.net

## ԱՍԱԼԱ-ի Մարտիկ Վարուժան Կարապետեանը Յուղարկաւորուեցաւ «Եռաբլուր»-ի Մէջ



Հայ ազատագրութեան գաղտնի բանակի՝ ԱՍԱԼԱ-ի անդամ Վարուժան Կարապետեանը յուղարկաւորած են «Եռաբլուր» զինուորական պանթէոնին մէջ:

«Արմէնփրես»-ի փոխանցմամբ՝ Կարապետեանի յուղարկաւորութիւնը տեղի ունեցած է զինուորական կարգով:

29 Յունուարին Հայաստանի մէջ 65 տարեկանին մահացած է ԱՍԱԼԱ-ի մարտիկ Վարուժան Կարապետեանը:

Վարուժան Կարապետեանը 80-ականներու սկիզբը ղեկավարած է Հայաստանի Ազատագրութեան հայ գաղտնի բանակի Ֆրանսայի շրջանի մարմինը: 1983 թուականին Փարիզի «Օռլի» օդակայանին մէջ տեղի ունեցած պայթումէն ետք ան ձերբակալուած է եւ Փարիզի մէջ կայացած դատավարութեամբ դատապարտուած ցմահ ազատազրկման: Բանտարկութենէն 17 տարի անց, հայկական կողմի դիմումներուն ընդառաջելով, պաշտօնական Փարիզը 2011-ին ազատ արձակած էր զինք եւ արտաքսած Հայաստան:

SYRIAN ARMENIAN RELIEF FUND
Զօրացինք Օժանդակենք Փրկենք
www.syrianarmenianrelieffund.org
Syrian Armenian Relief Fund
P. O. Box 1948
Glendale, CA 91209-1948

**CHANGE OF VENUE**
**Due to Weather Conditions, Valentine's Day Event has Moved to 1060 N Allen Ave, Pasadena**



Կազմակերպութեամբ ՍԴՀԿ Սապահ Գիւլ Մասնաճիւղի

Valentine's Day

Միջերկրական Ճաշեր, ներառեալ Գինի և զովացուցիչ:
Տեղի կ'ունենայ Շաբաթ 9 Փետրուար 2019, երեկոյեան ժամը 7:00-էն սկսեալ:
Մուտքի նուէր՝ $60
Վայր՝ 9537 Shoshone Ave, Northridge, CA 91325
Տեղերը ապահովելու համար՝
Հեռ. 818-434-4950, 559-313-0147



Join us for a night of divine
Mediterranean cuisine
Wine and soft drinks are incuded
It's our annual
Valentine's Day
Donation $60

## Շնորհահանդէս Նուիրուած Մարիէթ Մինասեան-Օհանէսի «Ջուլհակ Հօր Տղան» Հատորին



*Կիրակի, Յունուար 27, 2019-ին, Պոլսահայ Միութեան «Գրիգոր եւ Աւետ Քիւրքչիւօղլու» սրահը լի էր գրասէր եւ ընթերցասէր հասարակութեամբ, որոնք ներկայ էին «Ջուլհակ Հօր Տղան» գրքի Շնորհահանդէսին, գրի առնուած Միութեան քարտուղարուհի՝ Մարիէթ Մինասեան-Օհանէսի կողմէ:*

*Ձեռնարկը տեղի ունեցաւ Պոլսահայ Միութեան Մշակութային Յանձնախումբի նախաձեռնութեամբ:*

*Ձեռնարկին բացումը եւ հանդիսավարութիւնը կատարեց Մշակութային Յանձնախումբի ատենապետ՝ Տոքթ. Եօվհաննէս Գուլակ Աւետիքեան:*

*Գեղարուեստական բաժնով բեմ բարձրացան Լիլի Տապպաղեան՝ ջութակով եւ Տկ. Աստղիկ Տատուրեան ասմունքով:*

*Ամպիոն հրաւիրուեցաւ կրթական մշակ՝ ՀԲԸՄ Մանուկեան-Տէմիրճեան Վարժարանի Հայերէն լեզուի եւ Հոգեբանութեան ուսուցչուհի՝ Տկն. Ռոզալին Մատոյեան, որ հրաշալիօրէն եւ խզումով ներկայացուց հատորը: Տկն. Մատոյեանի վերլուծումը ջերմօրէն գնահատուեցաւ հանդիսականներուն կողմէ:*

*Մեներգի բաժինն ալ խանդավառութիւն ստեղծեց հանդիսականներուն հոգիներէն ներս՝ երբ Տոքթ. Աւետիքեան մեներգեց «Հայ Ֆէտայիներ» եւ «մի Պախրայ տեսայ» երգերը:*

*Խօսք առին նաեւ Մարիէթ եւ Պետրոս Օհանէս ամոլը, իրենց շնորհակալիքն ու սրտի խօսքերը փոխանցելով ներկաներուն:*

*Ապա Վերապատուելի Յովհաննէս Մելքոնեանի եւ իր կողակցին՝ Տկ. Ժանէթ Մելքոնեանի դպրոցական կեանքէ առնուած դրուագներով եւ փակման աղօթքով աւարտեցաւ ձեռնարկը:*

*Պոլսահայ Միութեան Մշակութային Յանձնախումբի կողմէ Ատենապետ՝ Տոքթ. Յովհաննէս Գուլակ Աւետիքեան հեղինակին յանձնեց յուշանուէր մը, առ ի գնահատանք իր նորատիպ հատորին:*

*Գրքի գինեձօնի գեղեցիկ արարողութիւնը կատարուեցաւ, որուն մասնակցեցան Պոլսահայ Միութեան Գործադիր Յանձնախումբի ատենապետ՝ Տոքթ. Մուրատ Քէօշքէր, նախկին ատենապետ՝ Արամ Գոչումեան, ներկաներէն՝ Տկ. Գարայեան եւ յայտագրի մասնակցողները:*

*Ձեռնարկի աւարտին հատուեցաւ կարկանդակը եւ հեղինակը մակագրեց իր գրքերը, որուն ընթացքին տեղի ունեցաւ նկարահանում եւ պատշաճ հիւրասիրութիւն:*

*Նշենք թէ սոյն ձեռնարկին մասնակցողներուն կենսագրականները ընթերցեց Տոքթ. Յովհաննէս Գուլակ Աւետիքեան, իսկ հատորին լրիւ հասոյթը նուիրուեցաւ Միութեան Մշակութային Ֆոնտին:*

*Գրի առաւ՝*
*Տոքթ. Յովհաննէս Գ. Աւետիքեան*

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* $50,00 * $100,00 (first class) for USA
$ 125,00 (Air Mail) for Canada.
$ 250,00 (Air Mail) Overseas.
Name: ------------------------------------------
Address: ----------------------------------------
City: --------- State:--------- Zip Code:------
Country: -------------
Tel :---------------------- Email: -------------------------

## ՀՀ Գլխաւոր Հիւպատոս Արմէն Բայբուրդեանի Այցը Կլենտէյլի Թ. Ջեֆերսոն Դպրոց



*Յունուարի 29-ին ՀՀ գլխաւոր հիւպատոս Արմէն Բայբուրդեանն այցելել է Կլենտէյլի Թ. Ջեֆերսոն տարրական դպրոց՝ Կլենտէյլի դպրոցների միացեալ շրջանի խորհրդի նախագահ Գրեգ Գրիգորեանի, խորհրդի անդամներ Արմինէ Կարապետեանի, Շանթ Սահակեանի, Նայիրի Նահապետեանի եւ Կլենտէյլի դպրոցական համակարգի կառավարիչ Ուինֆրիդ Ռոբերտսոնի ուղեկցութեամբ:*

*Դպրոցի սաները գլխաւոր հիւպատոսին դիմաւորել են աղուհացով եւ հայերէն ողջոյնի խօսքով: Գլխաւոր հիւպատոսը շրջել է դպրոցի դասասենեակներում, ծանօթացել, զրուցել հայ եւ օտարազգի աշակերտների հետ:*

*Կլենտէյլի հանրային դպրոցների FLAG ծրագրի հայերէն բաժնի պատասխանատու Միգանոյշ Մելքոնեանը ՀՀ գլխաւոր հիւպատոսին ներկայացրել է երկլեզու ուսուցման հայկական բաժնի աշխատանքները: ՀՀ գլխաւոր հիւպատոսը հետեւել է հայկական դասաժամերի ընթացքին, ծանօթացել աշակերտների՝ հայերէն լեզուի, հայ գրականութեան ու պատմութեան իմացութեան մակարդակին:*

*Կլենտէյլի դպրոցների միացեալ շրջանի խորհրդի անդամները գլխաւոր հիւպատոսին ներկայացրել են հայերէնի ուսուցման մեթոտներն ու յաջողութիւնները:*

*Դպրոցի հայ աշակերտները ՀՀ գլխաւոր հիւպատոսին ներկայացել են հայ գրականութեան ու երաժշտական նմուշների գեղեցիկ կատարումներով: Իր խօսքում ՀՀ գլխաւոր հիւպատոս Արմէն Բայբուրդեանը բարձր է գնահատել FLAG ծրագիրը, որը հնարաւորութիւն է ընձեռում Կլենտէյլի ամերիկեան հանրային դպրոցներում սովորել գրեթէ բոլոր առարկաները եւ խոստացել է աջակցութիւն ցուցաբերել այդ ծրագրին:*

## Սոնա Բեգլարեանի Բաձառիկ Ցուցահանդէսը Զօրայեան Թանգարանի Մէջ



*Յունուարի 22-23ն ընկած ժամանակահատուածում Զօրայեան Թանգարանը կազմակերպեց տաղանդաշատ արուեստագէտուհի եւ օրիորդ Սոնա Բեգլարեանի գեղանկարների ցուցահանդէս-վաճառքը:*

*Գեղանկարներն յիրաւի իւրայատուկ էին իրենց բնոյթով, որոնցում յստակ առանձնանում էին մեր պատմական վանքերի եւ եկեղեցների իւրայատուկ վերարտադրումը, հայ քրիստոնեայի հզօրագոյն կուսան հանդիսացող Խաչն ու մեր դասական մանրանկարչութիւնը յիշեցնող՝ վառ գոյների առկայութիւնը:*

*Ցուցահանդէս-վաճառքն ունէր բարեգործական բնոյթ, որից գոյացուած ընդհանուր հասոյթը արուեստագէտուհին տրամադիր է փոխանցել Արցախում բնակուող անապահով եւ բազմանդամ ընտանիքներին:*

*Ուրախութեամբ ցանկանում ենք տեղեկացնել, որ ցուցահանդէսն համախմբել եւ ոգեւորել էր հարիւրից աւելի արուեստասէրների, որոնք ոչ միայն եկել էին զմայլուելու արուեստի նրբաճաշակ գործերով, այլեւ իրենց գործուն ներդրումն ունենալու այս բարեգործական երեկոյին:*

*Բացման հանդիսաւոր արարողութեանը ներկայ էր Թեմիս Հոգեւոր Առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան Արք. Տէրտէրեանը, ով բարձր գնահատեց Սոնա Բեգլարեանի արուեստն ու մանաւանդ նրա հաւատի գործերը, որոնց արգասիքն է հանդիսանում արուեստագէտուհու սրտի փափագը:*

## Կարօ Փայլան Լիբանանի Մէջ Ծանօթացաւ ՀՄՄ-ի Սկաուտական Շարժումին



ՀՄՄ-ի Խալիլ Պատաուիի (Պէյրութ) ակումբին մէջ, Շաբաթ Յունուար 26-ին, Թուրքիոյ Խորհրդարանի հայ երեսփոխան Կարօ Փայլան եւ բեմադրիչ ու արտադրող Քատիր Աքըն ուրախ պահեր վայելեցին ՀՄՄ-ի սկաուտական շարքին հետ:

Ըստ «Արարատ» օրաթերթի փոխանցած տեղեկութիւններուն՝ ակումբի մուտքին հիւրերը ողջունեց ՀՄՄ-ի փողերախումբը, ապա Փայլան եւ Աքըն շրջագայեցան ակումբին մէջ, ծանօթացան ՀՄՄ-ի սկաուտական շարժումին, խմբակներուն, եւ ականատես դարձան անոնց շաբաթական աշխատանքներուն ու խաղերուն:

Սկաուտները Փայլանին նուիրեցին ՀՄՄ-ի սկաուտական փողկապ մը՝ անոր յաջողութիւն մաղթելով իր կարեւոր գործին մէջ:

## Ֆրանսա
## Արամ Շահպազեանի «Մոսկվիչ Իմ Սէր» Ֆիլմի Ցուցադրութիւնը




Անցեալ ամիս, Փարիզի շարժապատկերի սրահներէն մէկուն մէջ, ցուցադրուեցաւ Արամ Շահպազեանի «Մոսկվիչ իմ Սէր» շարժապատկերը, որուն մէջ կը տեսնուի Հայաստանը ինչպէս որ է: Կը ծանօթացուի տարեց մարդ մը եւ իր կինը Արուս: Համօն կ'ապրի իրականութենէն ամբողջովին կտրուած սիրոյ պատմութիւն մը: Արուս շատ աւելի գործնական է, սակայն՝ նոյնքան սիրահարուած խենթ ամուսինին:

Ամուսինները Ատրպէյճանէն փախստական զոյգ մըն են: Իրենց երազը կ'իրականանայ եւ տէր կը դառնան կարմիր «Մոսկվիչ» ինքնաշարժի մը, որոշ կանխավճար մը կատարելով: «Մոսկվիչ իմ սէրը» կը պատմէ սիրային չնաշխարհիկ պատմութիւն մը, տարբեր վայրերու այցելութիւններով:

Այս ժապաւէնը տակաւին Հայաստանի մէջ չէ ցուցադրուած, հակառակ որ մասնակցած է աշնան տեղի ունեցած «Ոսկէ Ծիրան» փառատօնին եւ մրցանակ շահած է:

Ֆիլմի գլխաւոր դերասանուհին է Հիլտա Օհան: Իսկ բեմագրութեան հեղինակներն են Լեւոն Մինասեան եւ Ժիւթեր Մաննի: Ֆիլմի արտադրիչը՝ Արա Աֆրիկեան: Ան նախքան Հայաստանի մէջ ցուցադրութիւնը՝ Ֆրանսայի մէջ շուկայական ցուցադրութեան նախաձեռնած է:

## Պոլսահայ Երգչուհիի Յաջող Համերգը Աթէնքի Մէջ

Աթէնքի Գոտալի Երաժշտանոցի տնօրէն ու խմբավար Միշալիս Պաթսէասի հրաւէրով, Գոտալի համերգային դահլիճին մէջ ելոյթ ունեցաւ պոլսահայ շնորհալի երգչուհի Գարին Քիւչիւքօղլուն:

«Մարմարա» թերթէն կ'իմանանք թէ համերգը որ տեղի ունեցաւ Յունուարի 26ին նուիրուած էր Կոմիտասի ծննդեան 150-ամեակին: Հակառակ անոր որ երաժշտանոցը քաղաքին կեդրոնին մէջ չէ, բազմաթիւ հայեր լեցուցած էին սրահը:

Գարին Քիւչիւքօղլուն երաժշտասէր հասարակութեան ներկայացուց 15 երգեր, յայտագրին մէջ տեղ տալով Կոմիտասի սիրուած ծանօթ երգերուն:

*Ճգնաժամային այդ օրերուն Կարս կը հասնէր հայրենասէր հոգեւորական Գարեգին Եպիսկոպոս Յովսէփեան, Գէորգեան Ճեմարանի անդրանիկ սաներէն, որ կը միանար դէպի Ջոր փախչողներու խումբին ու կը խրախուսէր զիրենք, ինչպէս երկու տարի առաջ, 1918-ի Սարդարապատի կռիւին, նոյնպէս իսկական հերոս Գարեգին Եպիսկոպոս պատրաստակամութիւն կը յայտնէր ճակատ երթալու եւ խրախուսելու հայ զօրականները, ստանալէ ետք Տ.Տ. Գէորգ Ե Սուրէնեանց Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնութիւնը: Ալեքսանդրապոլէն անցնելով Սրբա- զանը կրօնական Թափօր կազմել կուտար քաղաքի Սուրբ Աստուածածին եկեղեցիէն մինչեւ քաղաքապետարան, չորս եկեղեցիներու շուրջառազգեստ քահանաներով, որոնց գլուխը անցած, եպիսկոպոսական լրիւ զգեստաւորումով, գաւազանով եւ խաչով, կուրծքին կախած իր «քաջութեան նշանի ժապաւէնը որ ստացել էինք Սարդարապատի ճակատում մեր բերած մասնակցութեան եւ ծառայութեան համար»:*

*Քաղաքապետարանին առջեւ տեղի կ'ունենար «անդաստան եւ մաղթանք», որմէ ետք շտապ կը մեկնէին Կարս ներկայանալու ռազմաճակատի զօրավար Դանիէլ Փիրումեանին, առաջարկելով իրենց ծառայութիւնը բերել հայրենիքին: Փիրումեան Սարդարապատի յաղթանակին «Աւագ Զօրավարութեան» աստիճան ստացած էր, եւ զինադադարէն ետք, Կարսը հայոց ձեռքը անցնելով բերդապահ նշանակուած: Ինչպէս կը վկայէ Գարեգին Եպիսկոպոս, Փիրումեանէն աստիճանով աւելի բարձր էին զօրավար Նազարբէգեանը՝ Երեւան, զօրավար Սիլիկեանը՝ Ալեքսանդրապոլ, եւ Սուրմալուի մէջ զօրավար էր Դրօն (Դրաստամատ Կանայեանը) իր սպաներով:*



### Կարսի Մէջ

*Գարեգին Սրբազան նախ պատարագ կը մատուցանէր Կարսի մայր եկեղեցւոյ մէջ հոն հասած առաջին կիրակի օրը, ի ներկայութեան «հայ զինուորական եւ քաղաքական ամբողջ պաշտօնէութեան», յատուկ մաղթանք կատարելով հայոց զօրքերուն համար: Փիրումեան սիրով կ'ընդունէր Ղարաբաղցի իր հայրենակից Սրբազանը եւ իրեն ընկերակից հայորդիները, յանձնարարելով որ Սրբազանը ձի հեծած Սարըղամիշ երթար, դէպի ռազմաճակատ, օրհնելու համար զինուորները՝ յաղթանակի կոչ ուղղելով անոնց: Ապա, Փիրումեանի հրահանգով Գարեգին Եպիսկոպոս Կարս կը վերադառնար ու կ'այցելէր հայ որբանոցներն ու հիւանդանոցները՝ քաջալերելու համար անկեալները:*

### Յուսահատ Կացութիւն

*Երբ Գարեգին Սրբազան դժբախտ հայերուն դէպի Ջոր նահանջը կը տեսնէր, ինչպէս նաեւ Փիրումեանի յուսահատ վիճակը, ակամայ պիտի լսէր զօրվարին դիմումը: «Սրբազան, մի բան դուք պէտք է փորձէք, անձամբ բերդի գլուխը պիտի բարձրանաք եւ յայտնէք մեր անձնատուութիւնը»: Տրուած հրահանգին վրայ Գարեգին Եպիսկոպոս երկու զինակիցներով՝ գնդապետ Վահան Տէր Առաքելեանի եւ օդաչու սպայի մը, բերդ կը բարձրանար եւ սպիտակ դրօշը կը պարզէր, վտանգելով նոյն իսկ իր կեանքը: Հոն երեքը մէկ կը ձերբակալուէին Թուրքերուն կողմէ եւ կը տարուէին Թուրք գնդապետին մօտ որուն Սրբազանը կ'ըսէր թէ «մենք յաղթուած ենք եւ եկել ենք յայտնելու թէ մենք անձնատուր ենք լինում» դիմելով որ «մարդասիրութեամբ եւ գութով» վարուէր եւ դադրեցնէր կրակը Ջորին մէջ լեցուած «անմեղ երախաներուն եւ որբանոցներուն», անոնց կեանքը փրկելու համար: Սրբազանի խնդրանքը կը կատարուէր, կրակը կը դադրեցնէին, եւ ինք խորհրդակցաբար զօրավար Փիրումեանին հետ, երկուքը կ'արտօնուէին միասնաբար Ջոր իջնել եւ տանջուած հայերը հաւաքել ու Կարս հասցնել:*

### Կարսի Յանձնումը

*Կարսը Թուրքին յանձնուած էր, եւ Գարեգին Եպիսկոպոս որպէս հայրենասէր մարդ կատարած էր իր կարելին, եւ սակայն հիասթափ եղած Կարսի եւ անառիկ բերդին յանձնումին համար: Ան ըսեր էր թէ «Ազգերի պամութեան մէջ դժուար է գտնել այնպիսի խայտառակ պարտութիւն ինչպիսին մերն էր այդ օրերուն. լաւ կը համարէինք մի քանի հազար կոտորուէինք բերդի տակ, պաշտպանելով մեր հայրենիքը, քան անարգ փախստեամբ փրկէինք մեր կաշիները»: Կարս յանձնուեցաւ 1920 Հոկտեմբեր 30-ին: Գարեգին Եպս. Յովսէփեան իր Յուշերուն մէջ կ'աւելցնէ թէ խիստ մեղադրանքներու ենթարկուեցան Դանիէլ Փիրումեանն ու Կարսի նահանգապետ Ստեփան Ղորղանեանը որոնք միասնաբար չգործելով պատճառ դարձան Կարսի յանձնումին՝ առանց կռիւի:*



*Կարսի գրաւումէն ետք Թուրք կառավարութիւնը կը խուզարկէր հայոց բնակարանները եւ վատ պայմաններու տակ բռնի աշխատանքի կը լծէր զանոնք, եւ շատեր խստութեան չդիմանալով կը մեռնէին: Գարեգին Եպիսկոպոս կը մնար պատնէշին վրայ ու կ'այցելէր որբանոցներն ու հիւանդանոցները, եւ նոյնիսկ պետական արտօնութեամբ Կարսի հայ եկեղեցիներուն մէջ ժամապաշտութիւն ալ կը կատարէր՝ ի մխիթարութիւն վշտացեալ իր հօտին:*

### Ձեռագիր Ճաշոց Մատեանը

*Այդ ծանր օրերուն, հայագէտ եւ արուեստաբան Գարեգին Յովսէփեան Եպիսկոպոս կը զբաղէր նոյնիսկ հայերէն ձեռագիրներով, ինչպիսին էր Կարսեցի բժիշկ Երզնկացեանի մօտ պահուած Ագուլիս Վանքի մանրանկարեալ Ճաշոցը որ մնացեր էր Երզնկացեանի կնոջ պապէն որպէս յիշատակ իր Թոռան: Ձեռագիր Ճաշոցը Կարսէն դէպի Ջոր փախուստի ատեն պիտի իյնար Թուրքերուն ձեռքը եթէ Երզնկացեան հոգածու չըլլար անոր: Տրուած տեղեկութիւններէն կը պարզուէր որ Ճաշոցը «զարդարուած էր կենդանագիրներով, Թռչնագիրներով եւ ամբողջ երեսի պատկերներով», եւ հաւանաբար ԺԳ. դարու գործ մըն էր:*

### Գերութիւն եւ Վերադարձ Ս. Էջմիածին

*Գարեգին Եպիսկոպոս գերի վիճակի մէջ Կարս մնացած է ատեն մը, եւ մի քանի անգամ դիմած Կարսի Թուրք կառավարիչին զինք ազատ արձակելու եւ Հայաստան վերադառնալու, սակայն միշտ մերժուած էր: Ընդհակառակը, Նոյեմբեր 18-ին խուզարկութեան ենթարկուած է եւ բանտարկուած բազմաթիւ հայ կալանաւորներու հետ, եւ ապա աքսորուած Սարըղամիշ, եւ հոնկէ ալ փախած եռ դէպի Կարս: Փախուստի ճամբան եղած է խիստ տառապալից, ինչպէս Սրբազանը ինք կը նկարագրէ, թէ «սոված եւ մերկ» մինչեւ առաւօտ անտառներուն մէջ պահուտելով ու վերջապէս հասնելով Ետիքիլիսէ գիւղը, ուր կը ձերբակալուէր: Գարեգին Յովսէփեան եպիսկոպոս ծեծի եւ խոշտանգումի տակ կը հիւանդանար, եւ երեք շաբաթ ետք բռնի աշխատանքի կը լծէին զինք «Կարին գնացող վագոնները բեռցնելու»:*

*Բարեբախտաբար վերջ կը գտնէր հերոս հոգեւորական Գարեգին Սրբազանի ոդիսականը իր կրկին փախուստով 1921 Թուի Յունուար 19-ին, երբ կը դիմէր Սարըղամիշի կայարանապետի օգնականին, յայտնելով որ ինք լուսանկարիչ էր եւ թէ իր գործիքները Կարս կը գտնուէին, խնդրելով Թոյլ տալ իրեն երթալու եւ զանոնք բերելու: Կարս երթալով Սրբազանը կ'ապաստանէր Ամերիկեան հայոց որբանոցը մինչեւ Մարտ 21: Այդ ժամանակ Կարսի հայկական որբանոցները կը տեղափոխուէին Սովետական Հայաստան, որոնց մէջ կը գտնուէր նաեւ ծպտեալ Գարեգին Եպիսկոպոս Յովսէփեան, որ ապահով կը հասնէր Ալեքսանդրապոլ, եւ Յուլիս ամսուն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:*

NATIONAL NOTARY ASSOCIATION
MEMBER
NATIONAL NOTARY ASSOCIATION
NOTARY PUBLIC
Garine Depoyan
626-755-4773
554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106
ghdepoyan@gmail.com

# Մանուկին ճաշարանը






ԴՈԿՏ. ՀՐԱՅՐ ՃԵՊԷՃԵԱՆ

*Մանուկ Մարգոյեանը՝ Մանուկ պէյ, Օսմանեան կայսրութեան օրերուն եղած էր մեծահարուստ գործարար: Անոր կը պատկանէին, շատ մը այլ հաստատութիւններու կողքին, նաեւ այս մեծ հողատարածքին վրայ 1808 թուականին կառուցուած կեդրոնը Պուքրէշի մէջ, Ռումանիա, որ այդ օրերուն եղած է վաճառականական մեծ կեդրոն: Բայց այն, ինչ որ կը կապուի յատկանշական այս կեդրոնին հետ, ռուս-թրքական պատերազմի աւարտին կնքուած համաձայնութեան նախնական բանակցութիւններն են, որոնք տեղի ունեցած են այս վայրին մէջ: Եթէ մէկ կողմէ կայ կեդրոնին վաւերականութիւնը, բայց նաեւ՝ այդ օրերուն Մանուկ պէյին ազդեցիկ հեղինակութիւնը:*

*Յունուար 2019, Պուքրէշ, Ռումանիա: Կեցած եմ Մանուկ պէյին հիմնած այս գեղեցիկ կեդրոնին առջեւ, որ այսօր վերածուած է ճաշարան-իջեւանի: Բայց անպայմանօրէն ան այսօր կը կենայ որպէս պատմամշակութային ժառանգութիւն եւ զբօսաշրջիկներու համար այցելութեան գլխաւոր վայր: Անցնելով ու շրջագայելով վայրը՝ անոր գեղեցկութիւնը եւ պատմական արժէքը կը տեսնեմ ու կը սկսիմ քակել հայուն պատմութիւնը այս երկրին մէջ:*

*«Հին գաղութ է», խօսողը Վարուժան Ոսկանեանն է: Իսկ հի՞նը... «Քառասուն եկեղեցական առաջնորդ ունեցած ենք հազար չորս հարիւր թուականներէն սկսած, եւ այս իմաստով ալ արմատացած գաղութ է: Թէեւ մաշած ենք դարերու ընթացքին, բայց կը փորձենք գոյատեւել»:*

*Վարուժան Ոսկանեանը ծանօթ անուն է ոչ միայն հայկական կեանքին մէջ, բայց նաեւ՝ տեղական: Ան քաղաքական գործիչ է: Եղած է Նախարար Ռումանիոյ կառավարութեան մէջ, իսկ ներկայիս՝ խորհրդարանի մէջ պատգամաւոր: Ան նաեւ գրող է եւ ունի հրատարակութիւններ ռումաներէնով, որ թարգմանուած է քանի մը լեզուներու, ներառեալ՝ հայերէնի: «Երբ Նախարար էի, հայկական դրօշակը ռումանականին կողքին սեղանիս վրայ էր միշտ: Հայ ըլլալը պատուոյ տիտղոս է, եւ ռումանացիները կը յարգեն այս իրականութիւնը», ըսաւ Վարուժան:*

*Բայց Վարուժան Ոսկանեանը իրապաշտ եւ գործնական մարդ է: «Գաղութին հինգ առ հարիւրը միայն հայերէն կը խօսի»: Իսկ գաղութին թի՞ւը: Նկատի ունենալով, որ հայկական ներկայութիւնը երկարած է դարերու վրայ ու նաեւ՝ Ցեղասպանութենէն ետք, այսօր քանի մը հազարի շուրջ է, որ կը տարուբերի: «Հին հայերը ձուլուած են: Բայց կ՛անդրադառնան, որ իրենց արմատներուն մէջ կայ հայկական ինքնութիւն: Իսկ Ցեղասպանութենէ ետք ժամանողները կը փորձեն պահել լեզուն», ըսաւ Վարուժան:*

*Հայկական եկեղեցին դարձեալ ունի հին պատմութիւն: Բայց յատկանշական իրականութիւնը այն է, որ եկեղեցին օծուած է 1915 թուականին, երբ հայը կ՛ենթարկուէր Ցեղասպանութեան, միւս կողմէ ալ կ՛օծէր եկեղեցի: Կեանքը պէտք էր շարունակուէր...*



Ձախէն աջ՝ Վարուժան Փամպուքեան, Արմիկ Ոսկանեան, Ն. Վ. Սերկէյ Մինասեան, Վարուժան Ոսկանեան եւ Հրայր Ճէպէճեան:

*Կիրակիի պատարագը հոգեպարար էր եւ զգացական: Շարականները, խունկը, հաղորդութիւնը: Եւ կը նայէի իւրաքանչիւր հայու դէմքին... Ան, որ կը խօսի հայերէն, եւ ան, որ երեւի՝ ո՞չ... Բայց բոլորին համար հայուն քրիստոնէական հաւատքն էր, որ գիրենք ժողված էր եկեղեցիի յարկին տակ, ուր անոնք կը հաղորդուէին հաւատքին ու գոյատեւելու գիտակցութեանը մէջ: «Իմ մարմինս Ռումանիա ծնած է եւ այս իմաստով ռումանացի եմ: Իմ հոգիս հայ եկեղեցիին մէջ ծնած է, եւ հայ եմ», Վարուժան Փամպուքճեանն է, որ հայերէն կը խօսի, եւ ան երկրորդ հայ պատգամաւորն է Ռումանիոյ խորհրդարանին մէջ: Ան նաեւ ատենապետն է աւելի քան տասնութ փոքրամասնական համայնքներու, ներառեալ՝ հայկականը, որ պետութեան կողմէ ունի պաշտօնական ճանաչում: Վարուժանը չուշացաւ բաժնելու իր հպարտութիւնը ինծի հետ: «Մեծ ծնողներս Այնթապէն եկած են»:*

*Միքայէլ Ստեփան Գագազեանը ծնած է Ռումանիա: Ան խմբագիրն է եւ պատասխանատու տնօրէնը՝ «Նոր Կեանք» հայերէն-ռումաներէն ամսագիրին ու նաեւ «Արարատ» հաստատութեան, որ ունի հրատարակչական, տեղեկատուութեան եւ մշակութային բազմաթիւ գործունէութիւն: Ան որոշ ատեն մնացած է «հեռու» հայկական իրականութենէ, բայց «վերագտած» է իր ինքնութիւնը, երբ սկսած է իր ներկայ խմբագրական աշխատանքներուն: «Ուժեղ զգացում ունեցայ, որովհետեւ հայերու հետ կապի մէջ մտայ», ըսաւ ան:*

*Բայց հետաքրքրական էր լսել Միքայէլին հայկական ինքնութիւնները... Հայրը ռումանացի է, իսկ մայրը՝ հայ: Ամուսնացած է եւ կողակիցին հայրը հայ է, իսկ մայրը՝ տեղացի: Գագազեան. ան առած է իր մականունը իր կնոջ ինքնութենէն: Իսկ Ստեփա՞նը... ռումանացի հօր անունն է: «Ստեփան անունը հայերու կողմէ ալ կը գործածուի, այնպէս չէ՞», ըսաւ Միքայէլ պզտիկ ժպիտ մը դէմքին:*

*«Արարատ» հրատարակչատունը կը փորձէ հայուն պատմութիւնը եւ մշակոյթը ծանօթացնել ռումաներէն լեզուով տեղացի ժողովուրդին: Այս իմաստով անոնք հրատարակած են շատ մը գիրքեր: «Հայերը քիչ են, բայց շատ աղմուկ կը բարձրացնեն», ըսաւ Միքայէլ՝ դարձեալ ժպտալով: «Եւ որքան նուազի մեր թիւը, այդքան աւելի կը բարձրանայ մեր ձայնը: Միւս փոքրամասնութիւնները մեզմէ շատ աւելի են թիւով, բայց մեր ձայնը աւելի ուժեղ է», ըսաւ ան հաստատ ու վճռական:*

*Եւ այս հաստատ ու վճռական կեցուածքին ետին նաեւ կայ Միքայէլին համոզմունքը. «Այս բոլորը կ՛ուզեմ ընել, քանի որ հայ եմ: Ես ինքզինքս կը համարեմ գինուոր, որպէսզի այս մեր ժառանգութիւնը պահենք»:*

*Բայց այս բոլոր հայկական գործունէութիւններու ետին կայ Ռումանիոյ կառավարութեան նիւթական օժանդակութիւնը գաղութին՝ որպէս փոքրամասնութիւն-համայնք: Իսկ օժանդակութի՞ւնը... Մէկ միլիոն եւրօ՝ ամէն տարի:*

*«Հոս պատմութիւն կայ», ըսաւ Ժիրայր Պարոնեանը, երբ ներս մտայ հայոց գերեզմանատուն: Եւ իրապէս պատմութիւն... խաչքարեր եւ տապանաքարեր՝ տասնութերորդ դարէն սկսեալ: Շրջագայելով հայկական գերեզմանատան մէջ՝ սկսայ տեսնել հայկական պատմութեան մեծութիւնը եւ հարստութիւնը այս երկրին մէջ: Ռումանիա նաեւ եղած է ապաստան շատ մը յեղափոխական եւ կուսակցական գործիչներու: Եւ կը տեսնես նաեւ անոնց գերեզմանները... Հեռու հայկական հողէն, բայց՝ հայութեամբ շրջապատուած...*

*Ժիրայրը իր աչքի »բիբին« նման կը հոգայ գերեզմանատան մաքրութեան եւ շինարարական գործերուն: Կրցայ տեսնել հպարտութիւն մը իր մէջ՝ իր ըրած գործին նկատմամբ: Կրցայ նաեւ տեսնել, որ իր ըրածը առաքելութիւն է: «Հետս կրնամ տանիլ այս բոլորը», ըսաւ ան: Ժիրայրը Ռումանիա ծնած է: Ան արդէն հասած է ինիսունհինգ տարիքին... Երեւի կը զգայ, թէ մայրամուտը կը հասնի՞... Բայց այդ մայրամուտին մէջէն կայ Ժիրայրին ինքնութեան հպարտութիւնը: «Հայութիւնը ամէն ինչ է ինծի համար», ըսաւ ան:*

*Արսէն Արզումանեանը երիտասարդ եւ ուսումնատենչ հայն է, որ ինը տարի առաջ եկած է Հայաստանէն: Ան ձեռք ձգած է իր դոկտորական վկայականը՝ պաշտպանելով հայկական գաղութը Ռումանիոյ մէջ եւ ազգային-մշակութային ինքնութեան պահպանումի թեզը: Ան ուղեկցեցաւ ինծի՝ ծանօթացնելով հայկական կեանքը Պուքրէշի մէջ: «Հայկական ամէնօրեայ վարժարան մը ունէինք, որ 1962 թուականին փակուեցաւ,- ըսաւ Արսէնը:- Վարժարան չունենալը գաղութին համար բացասական ազդեցութիւն ունեցաւ»:*

*Կրցայ նաեւ տեսնել Արսէնին հայկական ուժը: «Հայերու հետքը շատ ուժեղ է հոս,- ըսաւ ան:- Այս ուժը նստած է հայերուն մէջ: Ապագան ինչ պիտի ըլլայ, շատ բարդ է: Կը փորձենք լաւատես ըլլալ»:*

*Իսկ լաւատեսութեան նշմարնե՞րը...*

*«Կ՛ամչնայի, որ հայ եմ, քանի լաւ հայերէն չեմ խօսիր,- ըսաւ Արմիկ Ոսկանեանը, որ քանվեց*

Շար.ը էջ 19

## Ոչ-Երկրային Կապի 3 Տեսակ

*Աշխարհի վրայ, ուր մեզի բարեբախտութիւն վիճակուած է ապրելու, իւրաքանչիւր հանդիպում ու պատահական ծանօթութիւն կը ծառայէ որոշ նպատակի: Երբեմն մեզի պէտք են մարդիկ, որպէսզի արթնցնեն մեզ ու օգնեն փոխելու մեր կեանքի ուղղութիւնը, երբեմն՝ որպէսզի առողջացնեն մեզ ու յիշեցընեն, թէ ով ենք մենք այս աշխարհի վրայ, իսկ երբեմն ալ անոնք այն մարդիկ են, որոնք մեզի կը հանդիպին միայն մէկ պահ:*

*Ճակատագիրի հեգնանքով՝ մենք պէտք չէ գիտնանք մեզի հանդիպած իւրաքանչիւր մարդու նշանակութիւնը, սակայն մենք պէտք է բաց ըլլանք այն բոլոր դէպքերուն համար, որ իր հետ կը բերէ նոր ծանօթութիւն: Երբեմն արժէ աշխարհին նայիլ իբրեւ խաչուող թելերու՝ արծաթափայլ կամ կարմիր, որոնցմէ իւրաքանչիւրը կ'արտացոլէ յստակ մարդու հետ հանդիպումը, եթէ անգամ անիկա դեռ չէ կայացած:*

*Մեր ողջ կեանքը իրարու հետ փոխգործակցութիւն է, եւ հակառակ որ ժամանակակից արհեստագիտութիւնները, հա մացանցը, հասարակական ցանցերը կը փորձեն համոզել մեզ, որ այդ փոխգործակցութիւնը կարելի է հասցնել նուազագոյնի, որեւէ բան կը փոխուի մեր գիտակցութեան մէջ, երբ մենք կը հասկնանք, որ մեր կեանքին մէջ ոչինչ ուղղակի այնպէս չի կատարուիր:*

*Ոչ-բոլոր հանդիպումները պէտք է երկարատեւ ըլլան: Երբեմն անոնք կրնան միայն մէկ պահ տեւել, հնարաւոր է ձեզի մէկ պահ կանգնեցնելու համար, որպէսզի դուք ճանապարհային արկածի չհանդիպիք, կամ որպէսզի հանդիպիք ձեր հաւանական սիրոյ: Երբեմն Տիեզերքը մեզի կ'ուղարկէ մարդիկ, որպէսզի օգնեն մեզի կեանքի մէջ, անգամ եթէ անոնք մեզի համար որեւէ կարեւոր բան պիտի չդառնան: Եւ թէեւ մենք ատիկա չենք կրնար կանխատեսել, մենք կրնանք մեզի նախապատրաստել կեանքի այդ անսպասելի իրադարձութիւններուն:*

*1) Մարդիկ, որոնք մեզի պէտք է արթնցնեն-*

*Անոնք այն մարդիկ են, որոնք մեր կեանք կու գան երկար ժամանակով: Երբեմն անոնք մեր գործընկերներն են, հարազատ հոգիները: Անոնք այն մարդիկ են, որոնք ամբողջութեամբ կը փոխեն մեր կեանքը:*

*2) Մարդիկ, որոնք կ'օգնեն մեզի յիշելու, որ ով ենք մենք-*

*Երբեմն կեանքի դժուար ճանապարհին մենք կը սկսինք կորսնցնել մեզ: Ամէնօրեայ ունայնութեան եւ հոգերու մէջ մենք կը մոռանք, թէ ինչ կ'ուզէինք դառնալ, ինչի մասին երազած էինք ու կ'երազենք մինչ այժմ, ով ենք մենք իրականութեան մէջ: Մենք պարզապէս մեզ կը վաճառենք հասուն ու պատասխանատու կեանքին՝ մոռնալով, որ ով ենք մենք: Եւ ատիկա նոյնիսկ աշխատանքի վայրի կամ ապրելու վայրի մասին չէ, այլ՝ հոգիի եւ ներքին աշխարհազգացողութեան: Եւ ահա կան մարդիկ, որոնք կու գան մեր կեանք, որպէսզի մեզ օգնեն հասկնալու, թէ ով ենք մենք, որպէսզի օգնեն ըլլալու այն, ինչ կանք իրականութեան մէջ:*

*3) Մարդիկ, որոնք կարեւոր են մէկ պահ-*

*Ասիկա այն դէպքն է, երբ մենք խօսակցութիւն կը սկսինք պատահական ուղեկիցի հետ ու ոչ մէկ կերպով կրնանք կանգ առնել: Կամ երբ մենք պարզապէս կը ժպտինք կողքի ստուիճաններով անցնող մարդուն: Եւ ատիկա կը թուի իսկապէս ոչ-երկրային կապ, որ պարզապէս պէտք է ըլլայ:*

*Միայն այն պատճառով, որ կարգ մը մարդիկ երկար չեն մնար մեր կեանքին մէջ, չի նշանակեր, որ անոնց հետ հանդիպելու մէջ իմաստ կամ նպատակ չկայ: Ամէն ինչ իմաստ ունի: Եւ այդ իսկ անտեսանելի թելերը, որոնք մեզ կը միացնեն իրարու հետ, մեր կեանքը այս աշխարհի վրայ այդքան աննկարագրելի կերպով անկանխատեսելի կը դարձնեն, քանի որ մենք երբեք չենք գիտեր, թէ երբ պիտի հանդիպինք անոր, որ մեզի պիտի ստիպէ փոխելու մեր կեանքը:*

## Անկեղծ Խորհուրդներ 60-Ամեայ Կիներէն՝ Երիտասարդ Կիներուն

*Մարկրիթ Մաննինկ յայտնի է իր ստեղծած համացանցային ամսագիրով, որ նախատեսուած է 60-ը անց կիներուն համար:*

*Անոր էջերուն մէջ 60-ը լրացած շատ մեծագոյն, աշխարհահռչակ կանայք կը պատմեն իրենց կեանքին մասին: Վերջերս Մարկրիթ խնդրեց անոնց ցանկութիւններ յղել բոլոր երիտասարդ կիներուն: Այսպէս՝*

*- Ապրեցէք ներկայով, ա՛յս պահուն:*

*- Նախասիրութիւն գտէք ձեզի համար: Անիկա ձեզ պիտի փրկէ ձանձրոյթէն:*

*- Միշտ ազնիւ եղէք դուք ձեր հետ: Ատիկա դժուար է, բայց միշտ ձեռնտու է ձեզի համար:*

*- Մի անհանգստանաք, որ կը մեծնաք:*

*Մտածեցէք, որ յանկարծ ձանձրալի չդառնաք:*

*- Մի կուտակէք անպէտք իրեր: Ազատուեցէք բոլոր անպիտան բաներէն:*

*- Սիրեցէք անկեղծ ու անշահախնդիր: Որքան հնարաւոր է՝ յաճախ ձեր մտերիմներուն ըսէք, որ կը սիրէք իրենց:*

*- Կարեկցեցէք ոչ միայն ուրիշներուն, այլեւ՝ դուք ձեզի:*

*- Հեռու վանեցէք ձեզմէ կատաղութիւնն ու վիրաւորանքները, յիշողութեան մէջ ձգեցէք սոսկ դրական յուզումները:*

*- Գնահատեցէք ձեր ընտանիքը: Անիկա միշտ ձեր կողքին պիտի ըլլայ, պիտի օգնէ, ինչ որ ըլլայ:*

*- Դուք ձեր մասին վատ մի արտայայտուիք եւ անգամ մի մտածէք: Յաճախ ժպտեցէք:*

*- Մի ձգտիք կատարելութեան. բացառիկ եղէք:*

*- Երբեք թոյլ մի տաք ոեւէ մէկուն ըսելու, որ այս կամ այն բանը ընելու համար դուք չափազանց ծեր կամ երիտասարդ էք:*

*- Մի վախնաք ծերանալէն: Բնութիւնը մեզի կը պատրաստէ մեր կեանքի իւրաքանչիւր փուլին:*

## Սովորութիւններ, Որոնք Կ'օգնեն Ձեզ Զարգացնելու Հոգեբանական Տոկունութիւնը

*Փիղը կտոր-կտոր կերէք: Ասիկա յաջողած ծրագրաւորման եւ նպատակներուն հասնելու եղանակ է: Խումբի մը մէջ արդիւնաւէտ աշխատելու համար հարկաւոր է հասկնալ, թէ ի՞նչպէս ձեր փոքր ներդրումը կ'օգնէ ամբողջ խումբին շարժելու դէպի նպատակի իրականացումը: Անոր համար անհրաժեշտ է մեծ նպատակը բաժնել փոքր մասերու եւ քայլ առ քայլ հասնիլ յաջողութեան:*

*Այս մարտավարութիւնը կ'աշխատի կեանքի բոլոր բնագաւառներուն մէջ: Եթէ դուք անընդհատ մտածէք միայն վերջնական նպատակին մասին, դուք միշտ պիտի ըլլաք ամպերու մէջ եւ տխրիք, որ իրականութեան մէջ դուք ոչինչ ունիք: Հակառակ պարագային, եթէ դուք կեդրոնանաք միայն փոքր խնդիրներու վրայ, դուք չէք կարենար տեսնել մեծ պատկերը, եւ ձեզի կը թուի, որ դուք կը դոփէք մէկ տեղի վրայ:*

*Անհրաժեշտ է համատեղել երկուքն ալ: Սկսեցէք փոքր քայլերէ, բայց մի մոռնաք ինչ նպատակ կը հետապնդէք:*

*Մտապատկերէք յաջողութիւնը: Ահա, թէ ինչ անհրաժեշտ է ճիշդ մտապատկերման համար՝*

*- Ամէն ինչ պատկերացուցէք որքան հնարաւոր է պարզ եւ յստակ:*

*- Գործողութիւնները դարձուցէք ձեր մտքին մէջ, որպէսզի հասցնէք անոնց մեքենական կատարման:*

*Եղէք լաւատես: Մի մտածէք անյաջողութիւններու մասին եւ պատկերացուցէք, որ ձեզ մօտ ամէն ինչ պիտի իրականացուի:*

*Յիշեցէք հետեւանքներուն մասին: Դուք չէք ուզեր հիասթափեցնել ձեր սիրելիները, կամ կը վախնաք ձեր յետագայ համբաւին համար: Եթէ կը կարծէք, թէ այնքան ալ չէք վստահիր ձեր ոգիի ուժին, պատկերացուցէք ձեր ձախողման հետեւանքները: Ատիկա պիտի օգնէ ձեզի:*

*Նախքան յաջորդ կարեւոր իրադարձութիւնը, նախապէս մտածեցէք ձեր գործողութիւնները եւ պատկերացուցէք, թէ ամէն ինչ ինչպէս պիտի ըլլայ:*

*Սորվեցէք ղեկավարել ձեր զգացումները: Այստեղ կ'օգնէ 4-4-4 տարբերակը՝ շնչեցէք 4 երկվայրկեան, արտաշնչեցէք 4 երկվայրկեան եւ կրկնեցէք այս ամէնը 4 անգամ:*

*Այս տարբերակը նման է մտախոհութեան մէջ օգտագործուող շնչառական վարժութիւններուն: Անոր էութիւնը նոյնն է՝ օգնել ձեզ հանգստանալու: Բոլորը գիտեն, որ շտապելով հնարաւոր չէ որոշումներ կայացնել, բայց գործնականօրէն ատիկա կառավարելը այնքան ալ դիւրին չէ: Յաջորդ անգամ, երբ դուք յայտնուիք ճնշուած իրավիճակներու մէջ, քանի մը վայրկեան դադար առէք, կեդրոնացէք շնչառութեան վրայ:*

*Փոխեցէք ձեր վերաբերմունքը: Ինչպէս գիտէք, մէկ գաւաթը կրնայ կէս չափ դատարկ կամ կէս չափ լեցուն ըլլալ: Միայն մենք կրնանք որոշել, որ ինչպէս կ'ուզենք տեսնել կեանքը:*

*Հոգեբանօրէն տոկուն մարդիկ կը փորձեն դրական կողմեր գտնել ամէն ինչի մէջ: Ինչո՞ւ, քանի որ անոնք գիտեն, որ բացասական մօտեցումը չ'օգներ իրենց հասնելու իրենց նպատակներուն աւելի արագ: Ատիկա միայն կրնայ խանգարել: Իրավիճակին վերաբերեալ ձեր վերաբերմունքը փոխելու ունակութիւնը չափազանց կարեւոր է յաջողած մասնագիտական կեանքի համար: Ի վերջոյ, երբ մենք լաւատես ենք, մեր պատճառարկութիւնը կ'աճի, եւ մենք աւելի կը ներգրաւուինք աշխատանքային գործընթացներուն մէջ:*

*Վայելեցէք փոքր յաղթանակները: Մի մոռնաք ուրախացնելու ձեզ: Դադրեցէք դուք ձեզ տանջելէ՝ ըսելով, որ դեռ ոչինչ ըրած էք: Հակառակ պարագային, ժամանակի ընթացքին պարզապէս կը սկսի թուիլ, որ դուք երբեք որեւէ բան չէք ըներ:*

*Պատ ճառարկութիւնը պիտի իյնայ, իսկ դուք միայն պիտի յոգնիք եւ զայրանաք:*

*Պահ մը կանգ առէք եւ մտածեցէք այն մասին, թէ ինչ ըրած էք ձեր նպատակին հասնելու համար: Նշեցէք փոքր յաղթանակները: Դրական ուժը պիտի օգնէ ձեզի յաղթահարելու իւրաքանչիւր խոչընդոտ:*

*Ստեղծեցէք ճիշդ միջավայր: Խմբային աշխատանքը եւ վստահութիւնը յաջողութիւններու հիմքն են: Կարեւոր չէ, թէ որքան տաղանդաւոր էք կամ յաջողակ, միայնակ դուք չէք կրնար հասնիլ նոյն արդիւնքներուն, ինչպէս միւսներուն հետ համագործակցելով:*

*Շփուելով մարդոց հետ, որոնք կը կիսեն ձեր տեսակէտերը եւ շահերը, դուք արագ կը զարգանաք եւ կը բարելաւէք ձեր դիրքը: Ամենակարեւորը՝ գտէք մարդիկ, որոնք նման են ձեզի, բայց ունին այլ հետաքրքրութիւններ եւս: Ասիկա պիտի օգնէ անընդհատ սորվեցնելու իրար:*

## Պատրաստենք Ոսպով Նախուտեստ Կամ Աղցան

*Ոսպով նախուտեստի կամ աղցանի համար անհրաժեշտ է՝ ոսպ 150 կրամ, բարակ հաց 1 հատ, սոխ 2 հատ, մածուն 1.5 գաւաթ, սխտոր 2 պճեղ, իւղ 1.5 ապուրի դգալ, ձէթ, աղ, սեւ պղպեղ:*

*Ամանի մը մէջ 1 թէյի դգալ կարմիր քաղցր պղպեղ, 0.3 թէյի դգալ սեւ պղպեղ լեցնել, բուսաիւղ աւելցնել, խառնել: Այս խառնուրդը քսել լաւաշին, զայն կտրտել ու լեցնել ափսէի մը մէջ եւ դնել փուռը՝ մինչեւ վարդագոյն դառնայ:*

*Ընթացքին խառնել, որպէսզի հաւասարաչափ պատրաստուի: Տապակին մէջ իւղ տաքցնել, կիսաօղակներու կտրտուած սոխը խառնելով տապկել՝ մինչեւ թեթեւակի սրճագոյն դառնայ, համեմել: Սխտորը աղով ճզմել, աւելցնել մածունը, վրան տարածել եփած սոխը, աւելցնել նախապէս խաշած եւ ջրքամած ոսպը, տարածել սխտոր-մածունը ու անմիջապէս մատուցել:*

*Բարի ախորժակ:*

www.massispost.com

# ՍԼԱՔՆԵՐ (3)

## Վարորդական Արտօնագիր Ինչպէ՞ս Ստացեր Են



ՎՌԱՄ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

*Ինչպէս նախորդ յօդուածով յիշեցուցինք, «մէկ րոպէ» թէ «մէկ վայրկեան», ոչ ոք իրաւունք ունի փակելու մանաւանդ մէկ ինքնաշարժի համար նախատեսուած ուղին, բացի եթէ «արտակարգ իրավիճակ» է. («իմըրճընսի», «ոչ էմէրճէնսի»). իսկ արտակարգ իրավիճակը շտապ օգնութեան գործին վերապահուած է. հասարակ քաղաքացիին պարագային եւ բարեկամին սպասելը արտակարգ իրավիճակ չէ, բացի եթէ այդ անձը ֆիզիքական ինչ-որ սահմանափակում, դժուարութիւն ունի եւ ինքնաշարժը կանգնեցնելու ուրիշ տեղ չկայ:*

*Զարմանալիօրէն, շատերու մօտ այն տպաւորութիւնը կայ որ կարելի է «ուզած տեղը» կանգնեցնել ինքնաշարժը -փողոցի երկայնքին, լայնքին, մայթին վրայ, շէնքի կանգառին առջեւ, մայթի կարմիր գիծին- երբ իրենք որոշած են որ իրենց պարագան «էմէրճէնսի» է, եւ, առաւել եւս, եթէ «մարկաթը միացրել» են: Վերջ: Դեռ ինչ ընէին...: (Միթէ միւս վարորդները կո՞յր են. թող շրջանցեն: Իսկ եթէ հակառակ ուղղութենէն «մեքենայ» կու գայ թող սպասեն: Մեր գլոյցը կէսթողենք):*

*Վստահաբար հանդիպած էք այնպիսի տգեղ դէպքերու, երբ բարկացածվարորդ մը ինքնաշարժին ազդանշանը միացուցած՝ «մի կերպ» կ՛անցնի գլոյցի բռնուած վարորդին կողքէն, որ իր հերթին, երեւի անարդարօրէն վիրաւորուածինքնասիրութիւնը պաշտպանելով, իր հերթին իր ինքնաշարժին ազդանշանին վրայ, աւելի երկար, կը սեղմէ: Իսկ եթէ յանկարծ դիմացինը փորձէ դարձեալ,պատասխանելէ, ալ վերջ. մեր հերոսը աջ ձեռքը յաւիտենապէս կը հանգչեցնէազդանշանին վրայ, եւ ձախն ալ պատուհանէն դուրս, միջնեմատն ալ, հպարտութեամբ, օդը պարզած՝ որպէս ընտանիքին արժանապատուութեան դրօշակը՝ իր (ան)կրթութեան ամենաբարձր մակարդակը կը բացայայտէ: Բայց կատակը մէկդի, ամէնէն զգուելին այն է, երբ այդ ցցուած մատը իգական սեռի ներկայացուցիչի մը կը պատկանի: Հանդիպած էք, վստահաբար, եւդժբախտաբար: (Իսկ այդ իգականին դժբախտ երեխան -եթէ ունի կամ օր մը անարժանաբար ունենայ- արդեօք ի՞նչ կրթութիւն պիտի ստանայ սիրունիկ մամայէն...):*

*Այս բոլորը ինչի՞ վերագրել. անգիտութեան, ամբարտաւանութեան, թէ սխալ տեղ-սխալ դրսեւորուած «յեղափոխական»ութեա՞ն: Եթէ վարորդականարտօնագիր ունին եւ այդ ստացեր են օրինական քննութենէն ետք, ուրեմն ամբարտաւա՞ն են. եսակեդրո՞ն. անկի՞րթ. փողոցային: Իսկ եթէ այդ արտօնագիրը ստացեր են «ծանօթ»ներու (այսինքն՝ Պենճամին Ֆրանքլինի մի քանի նկարի...) շնորհիւ, ուրեմն կաշառող են. զեղծարար. եւ նմաններէն ամէն բան կարելի է ակնկալել:*

*(Յաջորդիւ՝ Ջրաբաշխ Տօրակն Ու «Դրութեան Մէջ Մտնող» Բժիշկը):*

---

# ԿՀԳՄ Հաղորդագրութիւն

*2019 թ., Փետրուարի 1-ին, երեկոյեան ժամը 7-ին, Գլենդելի Հայ Երիտասարդաց միութեան մեծ սրահում տեղի ունեցաւ ԿՀԳՄ հերթական «ազատ բեմ» գրական ձեռնարկը, որին մասնակցեցին տասնեակ գրողներ եւ ընթերցողներ: Յիշեալ երեկոն ծաւալուն խօսքով բաց արեց ԿՀԳՄ գործող նախագահ, արձակագիր Հենրիկ Անասեանը, ով էլ ներկաների ուշադրութիւնը հրաւիրեց Հայոց հիմնի անյապաղ փոխման անհրաժեշտութեան վրայ: Բոլորն անխտիր նախապատւութիւնը տուեցին Արամ Խաչատրեանի հանրայայտ երաժշտութեան վերականգման օգտին եւ ցանկացան ամէնուրեք հարց բարձրացնել յանուն Հայոց նախկին հիմնի վերականգման եւ հրաժարուել ներկայիս հիմներգից, որի հիմքը Միքայէլ Նալբանդեանի «Իտալացի աղջկայ երգը» ոտանաւորն է, որը չի համապատասխանում Հայոց պատմական զարթօնքի ոգուն: Ներկաները միաձայն ցանկութիւն յայտնեցին հետայսու եւս թէ բանաւոր եւ թէ գրաւոր պայքարել յօգուտ Արամ Խաչատրեանական երաժշտութեամբ նախորդ հիմներգի վերականգման: Երեկոյի հիմնական մասը, որ վարեց գրող Յակոբ Մկրտչեանը, անցաւ գրողների յաջորդական ելոյթներով:*

*Հնչեցին մի շարք գրական սրտառուչ գործեր, որոնք արժանացան ծափողջյուններին: Սեփական ստեղծագործութիւնների եւ դասական գրական նմուշների ընթերցմամբ հանդէս եկան Վահէ Աւետիսեանը, Ռուբէն Կորիւնը, Վարսիկ Յակոբեանը, Սէլինեն, Գագիկ Կարապետեանը, Աիդա Վերդին (Պողոսեան), Էնջի Բաղդասարեանը, Արմէն Պողոսեանը, Խաչիկ Խաչերը, ընթերցուեցին նաեւ Գէորգ Քրիստինեանի եւ Վաչիկ Մէջլումեանի գործերից, իսկ արձակագիր Կիմայ Կիրակոսեանի, Յակոբ Մկրտչեանի եւ Էդիկ Ալաւերդեանի ջանքերով բեմականացուեց հայրենասիրական պատումի մի յուզիչ դրուագ: Հերթական գրական երեկոն աւարտուեց մտքերի ակտիւ փոխանակմամբ եւ հիւրասիրութեամբ:*

**ԿՀԳՄ Խօսնակ**

---

# Յովհաննէս Թումանեանի Գոհար Մտքերից

Շարունակուած էջ 13-էն

*կեանքը եւ ամուսնութիւնը կորցնում է իր գերագոյն խորհուրդը, դառնում է անտանելի, չնչին, բայց մաշող պայքարի հանդէս եւ դժբախտութեան աղբիւր:*

*֍ Գիտութիւնը, գեղարուեստը, գրականութիւնը - ամէն ինչ երեխան մանկութիւնից պիտի սովորի եւ որ գլխաւորն է պիտի խաղով սովորի, որ հեշտ ու հաճելի լինի: Ամէն ինչ կեանքում խաղ է ու հաճոյք, եւ կեանքում ամենալուրջ բանին էլ պիտի նայել որպէս խաղ. էն ժամանակ մարդիկ մի բան կը սովորեն, մի բան կստեղծեն հաճոյքով:*

*֍ Զգտում, բնաւորութիւն, ուղղութիւն- ամէն ինչ մայրն է տալիս. մայրն է երեխային կրթում, նա երեխային խաղերով պիտի կրթի եւ ինքն էլ մասնակից լինի խաղեր կազմելուն: Կէօթէի մայրը էդ լաւ մայրերից էր: Հեշտ բան հօ չի մայր լինելը, երեխայ կրթելը:*

*֍ Ինքնուրոյնութիւնը ամենաթանկ բանն է:*

*֍ Ծաշակը կեանքի բոյրն է:*

*֍ Կինը կեանքի հիմքն է, կեանքի աղբիւրը, ամենամեծ ուժը...*

*֍ Մարդն ինքը պիտի իրեն ճամբու դնի, իրեն ճանաչի, իրեն ուղղութիւն տայ ու զարգանայ:*

*֍ Ամենադժուար բանը, որին ձգտում են մարդիկ՝ ինքն իրեն ճանաչելն է:*

*֍ Աշխարհում ամէն բան հեշտ է, մի բան է դժուար. մարդ լինելը...*

*֍ Լաւ մարդ. էտ բնութեան, աւելի ճշմարիտը՝ մարդկութեան մէջ ամենակատարեալ ու ամենասքանչելի երեւոյթն է, եւ ամենահազուագիւտը:*

*֍ Աշխարհքում ամէն բան հեշտ է, մի բան է դժուար՝ մարդ լինելը դրա համար է, որ Համլետը, երբ իր հօրը ուզում է գովել, ասում է՝ մարդ էր նա: Հեշտ բան հօ չի մարդ լինելը. մարդ փնտրելիս էլ, երբ մարդու կորուստ ես զգում, աշխատում ես նոյնիսկ գտածին, եղածին մեծացնել- շատ բան տեսնել մէջը, բայց մի օր վերջիվերջոյ պատւում է, բացւում է, տեսնում ես՝ շա՜տ հասարակ կտոր է, շատ խամ:*

*«Ամէն մի հայ պէտք է զգայ, որ ինքն Ազատ Հայաստանի քաղաքացի է եւ գալիս է գործակցելու իր երկրի կառավարութեանը: ...Հայաստանի ազատ հողի վրայ նա շինելու է իր ազատ ու առատ տունը, Հայկական բարձրաւանդակի վրայ զարգացնելու է իր ազգային հանճարը եւ իր խօսքն ասելու է աշխահքին:*

*Նա կարող է, եւ իր կարողութիւնով նա իրաւունք ունի»:*

*Հայաստանի օգնութեան կոմիտէի առիթով*

*Երեւանում, Յովհաննէս Թումանեանի Տուն-Թանգարանում կայ մի սրահ, որտեղ այցելուին է ներկայացւում ճոխ, եզակի, հնատիպ գրքերի մի շքեղ հանդէս՝ Յովհ. Թումանեանի անձնական գրադարանը: Այն ամենահարուստ ու բազմաբովանդակ գրադարաններից է մեծ գրողների շրջանում. Լեւ Տոլստոյ, Գեօթէ, Թումանեան... Պահպանուել է գրադարանի 8150 (6160 անուն) գիրք ու պարբերական: Դրանցից հայերէն 2400 (2042 անուն), ռուսերէն 5220 (3700 անուն), այլ օտար լեզուներով 529 (430 անուն) գիրք: Գրքերը զետեղուած են 12 պահարաններում՝ ըստ թեմաների...*

***

*Թումանեանի դստեր՝ Նուարդ Թումանեան. «Յուշեր եւ գրոյցներ» հատորից.*

*«Գրքի պաշտամունքը Թումանեանի մօտ շատ ուժեղ է եղել: Բանաստեղծը գրադարանի գրքերը պահում էր խնամքով, իսկ գրքեր չխնդրելու յայտարարութիւնը փակցրել էր աշխատասենեակի պատին: Սակայն յաճախ ստիպուած էր զիջել, անգամ նուիրել: Թումանեանի գրադարանը նրա աշխատանքային գրադարանն էր, որի հետ նա մշտական շփման մէջ էր: Մինչ օրս էլ պահւում են այն գրքերը, որոնց էջերին առկայ են նրա առատ նշումները: Թումանեանն ինքն էլ իր գրադարանի առաջին քարտագրողն էր...»:*

*«Մեծ գրողներից ամենից շատ սիրում էր Շեքսպիրին: Գրական գրոյցների ժամանակ միշտ նրան էր դառնում, նրանից խօսում:*

*Շեքսպիրի դրամաներից ամենից շատ սիրում էր «Համլետը», որից հատուածներ անգիր գիտէր: Տանը մեզ համար երկու անգամ կարդաց եւ ամէն անգամ բացատրութիւններով ու ծանօթութիւններով:*

*Կարդում էր մեծ տրամադրութեամբ. մէկ գունատւում էր, մէկ պայծառանում, մէկ էլ տարւում, աշխարհից վերանում: Կարդում էր եւ ասես ամեն մէկի դերն ինքը խաղալիս լինէր, ապրելիս, մանաւանդ, երբ հասնում էր հօր ուրուականի պատկերին կամ Պոլոնիուսին...»:*

*«Վահան Տէրեանը ժամեր շարունակ խօսում էր պոեզիայի երաժշտայնութիւնից, տաղաչափութիւնից: Բանաստեղծութեան ձեւը նրան շատ էր զբաղեցնում: Ֆրանսիական բանաստեղծներ Վեռլենն ու Բոդլերը նրան այնպէս էին գերել, որ նա երազում էր տեսնել Փարիզը, մեծ ցանկութիւն ունէր Փարիզի կաֆէներում գիշերներ անցկացնելու, Վեռլենի ու Բոդլերի կաֆէներում, նրանց սեղանների շուրջը:*

*Հայրիկը համամիտ չէր Տէրեանի հետ.*

*-Վահանը լիրիկ տրամադրութեան, մեղմ բնաւորութեան բանաստեղծ է: Նա չի օգտւում ժողովրդական լեզուի անհուն գանձերից... Մինն ասի դու Ախալքալաք ես ապրել, Լուսաղբիւրից ես ջուր խմել, քո երկրից խօսի, քո ժողովրդի լեզուով բան ասա, նրա շունչը տուր, նրա ոճը բեր... Ինչ ես գնացել Փարիզի մայթերն ու կաֆէները երգում, հետն էլ տէրողորմեայ քաշում. էդ հալա հերիք չի, գալիս է էստեղ ինձ հետ էլ վիճում, ուզում է համոզի՝- թէ՝ սա է ճիշտը:*

*Ես ոչ մի բանում էնպէս համոզուած չեմ, ինչպէս լեզուի խնդրում: Ճիշտը սա է-ժողովրդական կենդանի լեզուով պէտք է գրել, որ ժողովուրդը կարդայ, բան հասկանայ»:*

## ՄԱՐԶԱԿԱՆ

### Քաթարն Առաջին Անգամ Նուաճեց Ասիայի Գաւաթը




Քաթարն առաջին անգամ նուաճեց ֆուտպոլի Ասիայի գաւաթը: Արաբական Միացեալ Էմիրութիւններում անցկացուած մրցաշարի եզրափակիչում Քաթարի թիմը մրցեց Ասիայի քառակի գաւաթակիր Ճապոնիայի հաւաքականի հետ եւ առաւելութեան հասաւ 3:1 հաշուով: Քաթարի թիմը նաեւ առաջին անգամ էր դուրս եկել եզրափակիչ:

Յիշեցնենք, որ 2022թ. աշխարհի առաջնութեան եզրափակիչ մրցաշարը կ՚անցկացուի Քաթարում:

### «Արսենալ»-ը Պարտուեց «Մանչեսթեր Սիթի»-ին

Պրեմիեր Լիգայի 25-րդ տուրի կեդրոնական խաղում «Մանչեսթեր Սիթի»-ն սեփական յարկի տակ ուժերը չափեց «Արսենալ»-ի հետ:

Դիտարժան խաղում աւելի ուժեղ գտնուեցին տանտէրերը: Գուարդիոլայի սաներն անչափ կարեւոր յաղթանակ տարան, իսկ թիմի ռմբարկու Սերխիօ Ագուերոն դարձաւ հեթ-տրիկի հեղինակ:

Յիշեցնենք, որ «զինագործներ»-ի հայազգի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը յայտաւորուած չէր խաղին:

Յաւելենք, որ այս տուրից յետոյ «Մանչեսթեր Սիթի»-ն 59 միաւորով 2-րդն է, իսկ Էմերիի սաները՝ 47 միաւորով 6-րդը:

### Դենիս Սուարեսը «Արսենալի» Ֆուտպոլիստ




Լոնտոնի «Արսենալը» պաշտօնապէս հաստատել է «Բարսելոնայի» սպանացի կիսապաշտպան Դենիս Սուարեսի տեղափոխութիւնը, փոխանցում է ակումբի մամուլի ծառայութիւնը:

25-ամեայ ֆուտպոլիստը մրցաշրջանի երկրորդ հատուածը վարձավճարով կ՚անցկացնի անգլիական ակումբում: Մրցաշրջանի վերջում «Արսենալը» հնարաւորութիւն կ՚ունենա ձեռք բերել նրա տրանսֆերային իրաւունքը:

Յիշեցնենք, որ նախօրէին «Բարսելոնան» պաշտօնապէս յայտնել էր Դենիս Սուարեսի տեղափոխութեան մասին, սակայն աւելի ուշ կայքից հեռացրել էր այդ լուրը:

Սպանացի կիսապաշտպանը 2016-ի ամրանը «Վիլիառեալից» է տեղափոխուել «Բարսելոնա», որի հետ նրա գործող պայմանագիրը նախատեսուած է մինչեւ 2020 թուականի Յուլիս: «Արսենալի» գլխաւոր մարզիչ Ունաի Էմերին 2014/15թթ. մրցաշրջանում Դենիս Սուարեսի հետ աշխատել է սպանական «Սեւիլիայում»:

### Լա Լիգա. «Բարսելոնա» - «Վալենսիա»՝ 2-:2

Պրիմերայի 22-րդ տուրի շրջանակում «Բարսելոնա»-ն «Կամպ Նոու»-ում ընդունեց «Վալենսիա»-ին:

Հանդիպման մեկնարկը շատ բարդ ստացուեց կատալոնացիների համար. նախ 24-րդ րոպէին հաշիւը բացեց Կեւին Գամեյրոն, իսկ 32-րդ րոպէին կոպիտ խաղաց տանտէրերի պաշտպան Սերխի Ռոբերտոն եւ հանդիպման մրցավար Ունդիանօ Մալենկոն 11-մեթրոնոց հարուած նշանակեց, որն էլ յստակօրէն իրացրեց Դանի Պարեխոն՝ 2:0:

39-րդ րոպէին նշակէտից հարուածելու իրաւունք ստացան կատալոնացիները. տուգանայինը վստահ իրացրեց Մեսսին: 64-րդ րոպէին արժենթինացու եւ Արտուրօ Վիդալի ջանքերով հաշիւը հաւասարուեց: Ինչպէս յետոյ պարզուեց, սա հանդիպման վերջին կոլն էր:

Այս կոլառատ խաղից յետոյ «կապտանռնագոյններ»-ը 50 միաւորով շարունակում են մնալ աղիւսակի վերին հորիզոնականում, «Վալենսիա»-ն 30 միաւոր ունի եւ 7-րդն է:

### «Ռեալն» Ուզում է Բենզեմային Փոխանակել Նեյմարով

«Ռեալը» դեռեւս չահագրգռուած է ՊՍԺ-ի յարձակուող Նեյմարի ձեռք բերմամբ: Sport-express.ru-ը գրում է, որ Goal պորտալը հաստատում է, որ «արքայական ակումբը» մտադիր է առաջարկել 26-ամեայ պրազիլացու համար 120 միլիոն եւրօ եւ յարձակուող Կարիմ Բենզեմային:

Բենզեմայի պայմանագիրը մատրիտեան ակումբի հետ կնքուած է մինչեւ 2021 թուականի Յունիսի 30-ը, Նեյմարի պայմանագիրը ՊՍԺ-ի հետ՝ 2022 թուականի Յունիսի 30-ը:

### Հայ ըմբիշները 4 ոսկե մեդալ են նվաճել Նիսում

Հայաստանի ներկայացուցիչները յաջող են հանդէս եկել Ֆրանսայի Նիս քաղաքում անցկացուած 1924թ. օլիմպիական ախոյեան Անրի Դեգլանի յիշատակին նուիրուած յունահռոմէական ըմբշամարտի մրցաշարում:

Հայաստանի թիմի 7 ըմբիշներից չորսը դարձել են մրցաշարի յաղթող: Ոսկէ մետալ են նուաճել Ռուդիկ Մկրտչեանը (55 կգ), Կարէն Ասլանեանը (67 կգ), Հրանտ Կալաթեանը (72 կգ) եւ Արսէն Ջուլֆալակեանը (77 կգ): Գէորգ Ղարիբեանը (60 կգ) եւ Արթուր Շահինեանը (97 կգ) դարձել են պրոնզէ մետալակիրներ:

Հայաստանի ներկայացուցիչներից մետալ չի նուաճել միայն 80 կգ քաշային կարգում աշխարհի ու Եւրոպայի ախոյեան Մաքսիմ Մանուկեանը, որը հանդէս է եկել 87 կգ քաշային կարգով:

### Շախմատի Աշխարհի Առաջնութիւնում Հայաստանը Կը Ներկայացնի Միայն Կանանց Հաւաքականը

Մարտի 4-15-ը Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում կ՚անցկացուի շախմատի աշխարհի առաջնութիւնը:

ՖԻԴԷ-ն արդէն հրապարակել է մրցաշարին մասնակցող երկրների անունները: Հայաստանն այս անգամ կը ներկայացնի միայն կանանց հաւաքականը:

Հայաստանի տղամարդկանց ընտրանին տեղ է գտել մրցաշարի մասնակիցների պահեստայինների թւում:

### Նաոմի Օսական Կը Դառնայ Աշխարհի Առաջին Ռակետ՝ Առաջինը Ասիացիներից




Թենիսի Աւստրալիայի բաց առաջնութեան կանանց մենախաղի ախոյեանի տիտղոսը նուաճած Նաոմի Օսական կը գլխաւորի WTA-ի համաշխարհային դասակարգման աղիւսակը՝ շրջանցելով ռումինացի Սիմոնա Հալեպին:

21-ամեայ մարզուհին կը լինի աշխարհի առաջին ռակետ դարձած առաջին ճապոնացին, նաեւ ասիացին: Մէկ տարի առաջ Նաոմի Օսական աշխարհի 72-րդ ռակետն էր:

Յիշեցնենք, որ Օսական առաջին անգամ նուաճեց AusOpen-ի ախոյեանի տիտղոսը: Եզրափակիչում նա երեք սեթում առաւելութեան հասաւ չեխ Պետրա Կվիտովայի նկատմամբ՝ 7:6 (7:2), 5:7, 6:4: Պայքարը տեւեց 2 ժամ 30 րոպէ:

Օսական Ջենիֆեր Կապրիատիից յետոյ 18 տարում առաջին մարզուհին է, որին յաջողւում է «Մեծ սաղավարտում» առաջին անգամ տիտղոս նուաճելուց յետոյ յաղթել նաեւ շարքի յաջորդ մրցաշարում: Նաոմի Օսական 2018թ. ԱՄՆ-ի բաց առաջնութեան եզրափակիչում պարտութեան էր մատնել ամերիկացի Սերենա Ուիլիամսին:

### Մարգարիտա Գասպարեանը Յաղթել է Թենիսի WTA Ladies Trophy Մրցաշարում



Ռուսաստանը ներկայացնող հայազգի թենիսիստուհի Մարգարիտա Գասպարեանը յաղթող է դարձել Սանկտ Պետերբուրգում անցկացուող WTA Ladies Trophy մրցաշարում:

Նա զոյգ կազմելով Եկատերինա Մակարովայի հետ, յաղթանակ է տարել զուգախաղերում: Եզրափակիչում նրանք 1 ժամ 29 րոպէում առաւելութեան են հասել Աննա Կալինսկա - Վիկտորիա Կուժմովա սլովակեան զոյգի նկատմամբ՝ 7:5, 7:5:

Մարգարիտա Գասպարեանի չորրորդ յաջողութիւնն է զուգախաղերում: Մինչ այդ նա յաղթել էր Պաքուի, Տաշքենտի եւ Պրահայի մրցաշարերում:

### «Եուվենտուսը» Մարսելոյի Համար «Ռեալին» Առաջարկել է 45 Միլիոն Եւրօ

Մատրիտի «Ռեալի» խաղացող Մարսելոն հնարաւոր է տեղափոխուի իտալական «Եուվենտուս»: Վեստի.ռու-ն գրում է, որ ակումբը հետաքրքրուած է պաշտպանին գնելու հարցում եւ պատրաստ է պրազիլացու համար վճարել, տարբեր տուեալներով, 40-45 միլիոն եւրօ:

Իտալական ակումբի ներսից յայտնել են, որ խաղացողին խոստացել են տարեկան 12 միլիոն եւրօ աշխատավարձ:

Գնման ժամանակ «Եուվենտուսը» նախատեսում է օգտագործել այն միջոցների մի մասը, որը կ՛ստանան Ալեքս Սանդրոյի հնարաւոր վաճառքից: Բայց «Ռեալից» դեռ պատասխան չեն ստացել, քանի որ պաշտպանի պայմանագիրը «Ռեալի» հետ կնքուած է մինչեւ 2022 թուականի ամառ:

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ



**ՌԱՖՖԻ ԷՔԻԶԵԱՆ**

*Հանգուցեալ Ռաֆֆի Էքիզեանի մահուան առաջին տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, Փետրուար 10, 2019ին, Սբ. Պետրոս Հայց. Առաքելական Եկեղեցւոյ մէջ, 17231 Sherman Way, Van Nuys, յաւարտ Սուրբ Պատարագի:*

*Սգակիրներ՝*
*Այրին՝ Տիկ. Սիլվա Էքիզեան*
*Որդին՝ Փաթրիք Էքիզեան*
*Դուստրը՝ Տէր եւ Տիկ. Սամ եւ Քարէն Գարակէօզեան*
*Եղբայրը՝ Տէր եւ Տիկ. Տիգրան եւ Մելօ Էքիզեան*
*Քոյրը՝ Տիկ. Արփի Արթինեան*

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

*Ծանօթ մանկավարժ եւ հասարակական գործիչ **ՓԱՅԼԱԿ ԱՀԱՐՈՆԵԱՆ**ի մահուան տխուր առիթով «Մասիս» շաբաթաթերթի խմբագրութիւնն ու անձնակազմը իրենց խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի համայն պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Շահէ եւ Արփի Կանիմեաններուն եւ Տէր եւ Տիկ. Արա եւ Տիանա Ահարոնեաններուն:*

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

*Ծանօթ մանկավարժ եւ հասարակական գործիչ **ՓԱՅԼԱԿ ԱՀԱՐՈՆԵԱՆ**ի մահուան տխուր առիթով Տէր եւ Տիկ. Կարօ եւ Անի Պէքարեան իրենց խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի համայն պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Շահէ եւ Արփի Կանիմեաններուն եւ Տէր եւ Տիկ. Արա եւ Տիանա Ահարոնեաններուն:*

*Առ այդ փոխան ծաղկեպսակի $100 կը նուիրեն «Մասիս»ին:*

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

***ԹԱԳՈՒՀԻ ՆԻԿՈՂՈՍԵԱՆ**ի մահուան առթիւ Հ.Մ.Մ.ի վարչութիւնը իր խորազգաց ցաւակցութիւնը կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար իր զաւկին Տէր եւ Տիկ. ընկ. Վահէ եւ Սեդա Նիկողոսեաններուն:*

*Առ այդ փոխան ծաղկեպսակի $100 կը նուիրեն «Մասիս»ին:*

## ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

***ԹԱԳՈՒՀԻ ՆԻԿՈՂՈՍԵԱՆ**ի մահուան առթիւ փոխան ծաղկեպսակի «Մասիս» շաբաթաթերթին եղած են հետեւեալ նուիրատուութիւնները.*

| | |
|---|---|
| *Տէր եւ Տիկ. Գալուստ եւ Լենա Տէրտէրեան* | *$100* |
| *Տէր եւ Տիկ. Վարդան եւ Կարինէ Գոճապապեան* | *$100* |
| *Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Արուսեակ Գրիգորեան* | *$100* |
| *Տէր եւ Տիկ. Կարօ եւ Սեդա Գրիգորեան* | *$100* |

## ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

***ՏՕՔԹ. ՄԻՍԱՔ ԷՔՄԷՔՃԵԱՆ**ի մահուան տխուր առիթով իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան պարագաներուն եւ հարազատներուն եւ փոխան ծաղկեպսակի կը կատարեն իրենց նուիրատուութիւնները «Մասիս» շաբաթաթերթին:*

| | |
|---|---|
| *Տէր եւ Տիկ. Լեւոն եւ Վարդուհի Պոսնոյեան* | *$100* |
| *Լիւսիա Թակրեան* | *$100* |
| *Պօղոս Տէրտէրեան* | *$50* |
| *Տէր եւ Տիկ. Ճան եւ Մարիա Քէօսէյեան* | *$50* |

# Մանուկին Ճաշարանը

Շարունակուած էջ 15-էն

*տարեկան երիտասարդուհի մըն է: ...Հայկական ինքնութեանս գիտակցութիւնը ինծի համար եղաւ ճամբորդութիւն մը, մինչեւ որ հասայ անոր ու գտայ զայն»:*

*Արմիկը մասնագիտացած է շարժարուեստի եւ թատրոնի մէջ: Ան ներկայիս իր ժամանակը տրամադրած է՝ պատրաստելով վաւերագրական ժապաւէն մը հայկական իրականութեան մասին, Ռումանիոյ մէջ:*

*Վահէ Յովակիմեանը եկեղեցւոյ դպիրն է: Երիտասարդ է, եւ պատարագի ժամանակ կը զգայի, որ հայերէնին տիրապետած է: «Կիպրոսի Մելգոնեան վարժարանը ուսանած եմ», ըսաւ Վահէն:*

*Սխալած չէի իմ գուշակութեանս մէջ: Դարձեալ մտորումներս եւ մտահոգութիւններս... Հայկական վարժարանի դաստիարակութիւնը եւ անոր ազդեցութի՞ւնը: Անոր առաքելութիւնը ու տակաւին ազգային մեր հաստատութիւններուն սփիւռքեան իրականութիւնները զիրար կամրջող եւ զիրար լիցքաւորող տրամադրութիւննե՞րը: Այս տեսիլք(ները) ինչպէ՞ս պիտի հաշուարկենք... Նիւթակա՞ն, թէ՞ ազգային եւ մշակութային արժէքներու պահպանումի նժարները աւելի պէտք է կշռէ...*

*Եւ Նարինէ Պոկտան-Կրո՞ւլը: Դարձեալ՝ Պուքրէշի երիտասարդուհիներէն: Արեւմտահայերէն կը սորվեցնեմ շաբաթօրեայ վարժարանին մէջ», ըսաւ ան: Ոչ թէ միայն հայերէն, այլեւ՝ արեւմտահայերէն: Իսկ մայրենիին իր ատակ ըլլա՞լը... Ան կ'աշակերտէ Վենետիկի Մխիթարեաններուն կազմակերպած հայագիտական դասընթացքներուն: Դարձեալ՝ սփիւռքեան եւ համասփիւռքեան մեր կապուածութիւնները եւ աշխատանքային համադրումներու դրական գործօնը:*

*Դոկտ. Սերկէյ Մինասեանը Հայաստանի Հանրապետութեան դեսպանն է Ռումանիոյ մէջ: Կիրակի ինք եւ իր երիտասարդ ընտանիքը եկած էին եկեղեցի: Պատարագէն ետք ան միացաւ ժողովուրդին, ուր ամէն կիրակի բոլորը միասին կը մէկտեղուին սրահին մէջ՝ հիւրասիրութեան եւ հաղորդակցութեան համար: Դեսպանը ինք ալ ժողովուրդին հետ էր եւ կը խօսէր բոլորին հետ: Զուշացաւ իր ակնարկութիւնը. «Այս հաղորդակցութիւնը կը սիրեմ: Գաղութը կ'ապրեցնէ»:*

*Մաշո՞ղ գաղութ... Թերեւս: Բայց ապրած է տարիներու ընթացքին ու տակաւին ապրող է այսօր ու նաեւ՝ ապրեցնող... Եւ այս՝ պատմութեան ամբողջ ընթացքին:*

*Մանուկ պէյը ապրեցաւ իր ժամանակներու պատմութիւնը, եւ այդ պատմութիւնը կը շարունակուի: Եթէ Մանուկին ճաշարանով, բայց՝ հասնելու համար այսօրուան: Պատմութիւնը, որ կ'ապրի եւ կը շարունակուի... Այս պատմութիւնը շարունակուող է, քանի «արմատացած» է... Իսկ արմատը հայուն ազգային ինքնութիւնը եւ մշակոյթն է...*

*Ասիկա այն ինքնութիւնն ու մշակոյթն է, որ հայը կ'ապրեցնէ:*

*Մանուկին ճաշարանը... Հայուն սկսած պատմութիւնն է, որ կը շարունակուի: Եւ կը շարունակուի, քանի այս հայուն պատմութիւնը ապրուած է ու տակաւին կ'ապրի եւ կ'ապրեցնէ: Եւ կ'ապրեցնէ վաղուան տեսիլքով ալ...*

# Հայ Եկեղեցու 20-րդ Դարի Նշանաւոր Գործիչներ

Շարունակուած էջ 8-էն

*Զոյգ նիստերի ընթացքին հոգեւորականներ եւ հայագէտներ կը ներկայացնեն անուանի եկեղեցականներին նուիրուած զեկուցումներ եւ տեսանիւթեր, մշակութային ազդագիրը կը պարունակի երգչախմբային եւ գրական կատարումներ:*

*Ցետագային առաւել ամբողջական կը ներկայացնենք համաժողովի ծրագիրը, եւ թեմիս հայորդիները կարող են հետեւել եւ իրենց մասնակցութիւնը բերել եւ մէկ անգամ եւս համոզուել, թէ ինչպէս մեր եկեղեցին ու պետութիւնը կենդանի, բաբախող, նոր օրերին նոյնպէս սնուցող իրողութիւններ են:*

# Ուշագրաւ Հրատարակութիւն մը

Շարունակուած էջ 13-էն

*եւ առաջ այդ լեզուն օգտագործող համշէնցիներ բաւական երկար վարանած էին իրենց արտնի լեզուին արժէք մը ներկայացնելու խնդրին մէջ: Այդ է պատճառը, որ ժամանակի հոլովոյթով նուազած էր լեզուի գործածութիւնը եւ նոր սերունդները ընդհանրապէս հեռացած էին իրենց մայրենիէն: Միւս կողմէ սակայն գրական գետնի վրայ լեզուն վերջերս կ'արժանանար որոշ ուշադրութեան: Այդ է պատճառը, որ «Արաս» հրատարակչատունը հրատարակած էր Մահիր Էօզքանի «Համշէնի հէքեաթներ»ը, իր բնագիրով եւ հայերէն տարբերակով:*

*Միաժամանակ կը հրատարակուի «Կոր» պարբերականը, որ իր կարգին կը փորձէ ընդլայնել համշէնի բարբառի գոյատեւումը: Բոլոր այս յատկութիւններով ողջունելի գործ մըն է, որ լոյս աշխարհ կու գայ շնորհիւ Հուրիյէ Շահինի:*

*«ԱԿՕՍԿ»*

## ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
հեռաձայնել՝ (626) 398-0506



Ձայն վաղը կառուցելու համար, այժմ ձեր օգնութեան կարիքը ունինք

**Կիրակի, Փետրուար 17, 2019**
4:00PM to 10:00PM PST
ARTN TV | USArmeniaTV | KVMD TV
Facebook Live | YouTube Live | Online

ARMENIAN AMERICAN MUSEUM
**TELETHON**
**SUNDAY, FEBRUARY 17**

**Նուիրէք այսօր. Դիտէք Փետրուար 17ին:**

Donate By Phone
**(800) 655-9554**

Donate By Check
**111 East Broadway, Suite 207**
**Glendale, CA 91205**

Donate Online
**GiveAAM.org**

Հայ-ամերիկեան թանգարանին նուիրուած պատկերասփիւռային անդրանիկ դրամահաւաքը՝ թելեթոնը, տեղի պիտի ունենայ Կիրակի, 17 Փետրուարին, նպատակ ունենալով հանրութեան աւելի մօտէն ծանօթացնել թանգարանին ծրագիրը եւ ծրագիրին իրականացման ի նպաստ գումարներ հաւաքել:




The Armenian American Museum and Cultural Center of California is a 501(c)(3) non-profit organization. Federal Tax ID: 47-2465341.

ACF AGBU Armenian General Benevolent Union Western District Սոր Օր